



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1905<sup>101</sup>

891.99

p-35







881-99

10-35

13 APR 2011

Nr. 23. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ Nr. 23.

ՐԱՖՖԻ

# ԶԱԼԱԼԵՒԻԹԻՆ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՐԱ ԱՐՇԱԽԱՆՔԻՑ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Համ-Եր  
Արշախան-Եր  
Իս/Եր-Եր-1390

ՎԻԵՆՆԱ

ՄԻԹԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1905.




24.08.2013

59.389




2899-90





*Բաղդատ*



## ԶԱԼԱԼԵԴԴԻՆ

(ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՐԱ ԱՐՇԱՒԱՆՔԻՑ)

Ա.



այիս ամիսը 1877 տարուայ մօտե-  
նում էր իր վախճանին: Աղբա-  
կայ՝ Հիանա դաշտերից մէկի վրայ,  
առաւօտեան մառախուղի միջից,  
հաղիւ երեւում էին մի քանի  
վրաններ, սեւ կապերտից պատրաս-  
տուած, որոնք բոլորաձեւ շարուած  
էին մինը միւսի մօտ, թողնելով իրանց  
մէջտեղում բաւական ընդարձակ հրապա-  
րակ: Տեսնողը առաջին անգամից կը կարծէր, թէ դրանք  
մի խաշնարած ցեղի չաղրներ են, որ զետեղուել էին այդ  
կանաչազարդ հովտի մէջ, իրանց անասունների համար  
արօտ գտնելու: Բայց քանի որ արեւը բարձրանում էր,  
լեռներին պատած մառախուղը աւելի եւ աւելի նօսրա-  
նում էր, վրանների տարածութիւնը ընդարձակ հովտի

<sup>1</sup> Աղբակը տաճկական Հայաստանի գաւառներից մէկն է, որ սահմա-  
նակից է Պարսկաստանի Խոյ եւ Սալմաստ գաւառներին:



մէջ հետզհետէ մեծ քանակութիւն էր ներկայացնում: Այս կասկածելի երեւոյթը այն ժամանակ նրան բանակի ձեւ էր տալիս:

Եւ իրաւ, վրանների առջեւ ցցուած երեւում էին եղեգնայ երկայն նիզակներ, որոնց ծայրերը զարդարած էին սեւ փետուրներով, իսկ հրապարակի վրայ անբացատրելի խռովութեան մէջ շարժվում էին զինուորուած տղամարդիկ, որոնց երեսները արտայայտում էին կատաղի անհամբերութիւն: Բանակից հեռու, դալար խոտերի մէջ, արածում էին բոլորովին պատրաստ, թամբած ձիաներ, որոնց առջեւի եւ ետեւի ոտներից մէկը շղթայած էին բրնձիկներով չլ փախչելու համար:

Վրաններից մէկի առջեւ, — որ իր մեծութեամբ եւ փառահեղութեամբ որոշվում էր միւսներից, — ցցած էր մի կարմիր դրօշակ, որի չորս անկիւնների վրայ կարդացվում էին, արաբական տառերով դրոշմուած, չորս անուններ՝ — Ալի, Օսման, Օմար եւ Աբուբէքր: Դսլամի նախկին խալիֆաների այս չորս պատկառելի անունների մէջ տեղում նշմարվում էր մի սպիտակ ձեռք, որպէս օրինակ մի աներեւոյթ աջի, որ իր հովանաւորութեան ներքոյ պիտի առաջնորդէր զինուորուած ամբոխը դէպի պատերազմի դաշտը:

Այս իսկ վրանի շուրջը հաւաքուած էր մարդիկների բազմութիւն, որոնք անդադար եւ եւ մուտ էին գործում նրա մէջ:

Այնտեղ թանձր թաղիքի վրայ նստած էր միջահասակ մի մարդ կրակոտ աչքերով եւ ալեխառն մօրուքով: Նա ոտքից ցզուլս հագնուած էր սպիտակ գունով, որ արեւելքում նշան է բարեպաշտութեան եւ մարդու անձնազոհութեան, որ իր կենդանութեան ժամանակ զգեցել

էր մահուան պատանքը: Ժերունու հաստ գօտիի աջ կողմից քարշ էր ընկած մի երկայն թասբէկ (տէրողորմեա) խոշոր հատիկներով, որոնք բաժանուած էին որոշեալ թուով իւրաքանչիւր աղօթքի կարգը եւ համարը պահպանելու համար: Դսկ գօտիի ձախ կողմից երեւում էին կեռ խէնջարի եւ մի զոյգ ատրճանակի ծայրերը, որոնց փողերն թագնուած էին հալէբեան վերարկուի տակ, որ անփոյթ կերպով ձգած էր նրա ուսերի վրայ: Դյուխը փաթաթած էր սպիտակ ապարօշով (չալմայ), որի վրայ երեւում էին մետաքսեայ դեղին թելերով ասեղնադործած արաբական տառեր: Նա նստած էր ծալապատիկ կերպով եւ ծնկների վրայ դրած ունէր մի կեռ թուր Դամասկոսի շէնքով:

Այս պատկառելի ծերունին իր արտաքին կերպարանքով ներկայացնում էր մի անձնաւորութիւն, որ կրում էր իր մէջ կրօնի քերականութիւնը, որպէս մի բարձր հոգեւորական, եւ պատերազմողի քաջագնական ոգին, որպէս հզօր զինուոր: — Նա եւ շէյխ էր եւ զօրավար:

Նա նստած էր վրանի բարձր եւ պատուաւոր մասնում, որպէս նախապետ եւ իշխան, իսկ իր աջ եւ ձախ կողմերում կարգով շարուած էին մի քանի աղաներ հնադարեան զէնքերով: Դրանց մերձաւոր ընտանութիւնը Շէյխի հետ արդէն ցոյց էր տալիս, թէ հասարակ մարդիկ չեն, այլ գլխաւորներն են այն ամբոխի, որ դրսում զետեղուած էին վրանների մէջ, կամ հաւաքուած էին հրապարակի վրայ: Աղաները լուռ էին եւ խօսում էին այն ժամանակ, երբ Շէյխը խօսեցնում էր:

Շէյխի մօտ մի քաշքուլի<sup>1</sup> մէջ ածած էին թրդթերի մանր կտորտանք, որոնք միաշափ կերպով ծալած

<sup>1</sup> Մի անօթ, որ կրում են դերվիշները եւ պատրաստվում է հնդկական ընկուղի կեղեւից, կամ մի տեսակ ծովային խեցիկից, որ սեխի ձեւ ունի:



էին եռանկիւնի ձեւով: Այս փոքրիկ ծրարները նման էին այն թալիսմաններին, որ ջադուկները տալիս են մարդկանց զանազան խորհրդաւոր նպատակներով: Բայց իսկապէս կախարդական ոչինչ չը կար նրանց մէջ, այլ նրանց վրայ գրուած էին մի-մի տող Ղօրանի այն այեթ-ներից, որոնց զօրութեամբ մարդ ազատ է մնում ամեն տեսակ չարից եւ փորձանքից:

Վրանի մուտքը բաց էր: Դրսում դանուած բազմու-թիւնից մի-մի մարդ անդադար ներս էր դալիս. նա դեռ չէմքի վրայ չը հասած, չոքում էր, երկրպագութիւն էր տալիս, եւ այնպէս չոքէչոք մօտենում էր Շէյխին, իր սուրը դնում էր նրա ոտքերի մօտ եւ ձեռքը համբուրում էր: Յետոյ ծերունին առնում էր քաշքուշի միջից եռանկիւնի ձեւով ծալած թղթերից մէկը եւ տալիս էր համբուրողին: Նա առանց ոտքի վրայ բարձրանալու, նոյն-պէս չոքէչոք յետ էր դառնում եւ դուրս էր դալիս վրանից:

Այսպէս այցելուները անդադար մինը միւսի ետեւից, նոյն ծէսը կատարելով, ներս էին դալիս ու դուրս դնում: — Ամեն մի քաջ, իր սուրը Շէյխի ոտների մօտ ձգե-լով, նուիրում էր նրան եւ փոխարէնը ստանում էր խորհրդական թղթերից մէկը, որ անխոցելի պէտք է պա-հէր նրան թշնամու զէնքերից: Եւ այս պատճառով վրա-նից դուրս եկածին պէս, նա խսկոյն մի շորի կտորի մէջ դնելով, կարում էր իր աջ թեւքի վրայ:

Երբ թղթերի բաժանման գործը վերջացաւ, դրսում լսելի եղաւ մի թմբուկի ձայն, եւ զինուորուած բազմու-թիւնը ամեն կողմից շտապով սկսեց մօտենալ սրբազան զօրավարի վրանին: Դսկ երբ բոլորը հաւաքուած էին, այն ժամանակ դուրս եկաւ Շէյխը: Ամբողջ բազմու-

թիւնը աջ ձեռքը երեսին քաշեց եւ լուռ օրհնութիւն կարդաց (սալաւաթ): Այս գործողութիւնը մահմետա-կանների մէջ նոյն նշանակութիւնն ունի, որպէս քրիս-տոնեաների մէջ երես խաչակնքելը:

Որովհետեւ ուրիշ բան չը կար, ձիերի թամբերը միմեանց վրայ դարսելով, վրանի առջեւ կազմուեցաւ մի ամբիոն: Շէյխը բարձրացաւ նրա վրայ: Նա իր ձեռքում չունէր դաւազան, որ սովորաբար կրում էր քարոզի ժա-մանակ, այլ նրա փոխարէն բռնած ունէր կարմիր դրօշա-կը, որի գլխին փողփողում էր սպիտակ աջը չորս խալի-ֆաների անուններով: — Այս դիւքը յիշեցնում էր այն հրաշալի երեւոյթը, երբ Արաբիայի մարգարէն անապատի մէջ առաջին անգամ բարձրացաւ ուղտերի թամբերից կազմուած ամբիոնի վրայ եւ խօսեց իր ոգեւից ճառը:

Շէյխի քարոզը սկսուեցաւ օրհնութիւններով, որոնց մէջ խիստ ջերմեւանդ արտասանութիւններով փառաբան-վում էին Ալլահի, Մուհամմէտի եւ նրա գլխաւոր յաջորդ-ներին՝ Օմարի, Օսմանի եւ Աբուբէքրի անունները: Յետոյ սկսուեցաւ մի քաջալերական ճառ հետեւեալ խօսքերով.

«Ո՛վ Դաւամի որդիք, մեծ մարգարէն — փառք իր զօրութեանը — կոչում է ձեզ մի սուրբ գործի համար, կոչում է ձեզ պատերազմել իր կրօնի թշնամիների դէմ, որոնք սկսել են թափել Աստուծոյ ծառաների արիւնը: (Եւ թո՛ղ նզովեալ լինին նրանք):

Վհատութիւնը, երկչոտութիւնը եւ կասկածը թո՛ղ հեռու լինին ձեզանից, որովհետեւ երկիւղը Աս-տուծոյ զինուորների համար չէ: Տէրը ինքը կը տայ ձեր բազուկներին զօրութիւն, եւ թշնամու պարանոցները ձեր սրերի առջեւ կը կարատուին, որպէս չորացած հասկը հնձողի մանդաղի առջեւ: Դուք ձեր ձեռքով կը բռնէք



Նրանց զնդակները եւ զէպի իրանց յետ կը դարձնէք։  
Ձեր անձները պաշտպանուած կը լինեն երկաթեայ պա-  
րիսպներով, որոնց ձեր աչքերը չեն տեսնի։ Ձեզ աջակից  
կը լինեն կոտորող հրեշտակների աներեւոյթ գունդերը,  
որոնց մարգարէն ձեզ օգնութեան կ'ուղարկէ։ Մեծ է  
Խալամի Աստուածը եւ բացի նորանից ուրիշը չը կայ։

Բոլոր գաւուրները պիտի են Աստուծոյ առջեւ։  
Նրանց կայքը, կեանքը, ընտանիքը, եւ ամեն ինչ, որ  
պատկանում է անհաւատներին, Աստուած մատնում է  
ձեր ձեռքը։ Յափշտակեցէք, կողոպտեցէք, այրեցէք եւ  
կոտորեցէք, որքանով կը լիանայ ձեր սիրտը։ Աւարը եւ  
իր կրօնի թշնամիների արիւնը Աստուած հալալ է՝  
անում սուրբ պատերազմի զինուորներին։

Ձեզանից կ'ընկնին նրանք միայն, որոնց սրտերը կը  
մոլորեցնէ սատանան եւ որոնց հոգիները կը սառչին։  
Երկշտները ատելի են Տէրի առջեւ։ Եւ աւելի ատելի կը  
լինեն նրանք, որ կը փախչեն կռուի դաշտից։ Ձեր թի-  
կունքը չը պիտի տեսնի թշնամին։ Նա, որ Աստուծոյ  
համար է պատերազմում, սուրը ձեռքում պիտի մեռնի։

Երբ որ ձեզանից մէկը թողնելու լինի պատերազմի  
դաշտը, այն ժամանակ Աստուած կը զայրացնէ կնոջ  
սիրտը, որը կանգնած չաղբի մուտքի առջեւ, կ'ընդունէ  
իր տղամարդին այս խօսքերով. «Գնա՛, հեռացի՛ր, դու  
իմ այրը չես։ Ինչո՞ւ չեն տեսնում քո վէրքերը, ինչո՞ւ  
դու մենակ դարձար, ո՞ւր են քո ընկերները. — հեռա-  
ցի՛ր, նա իմ այրը լինել չէ կարող, որ անպատուեց իր  
զէնքերը»։ Ձը կայ մի աւելի դառն բան, քան կնոջ յան-  
դիմանութիւնը. բայց Աստուծոյ զգուանքը սարսափելի է։

<sup>1</sup> Հալալ համարվում են այն բաները, որոնք օրէնքով սուրբ են  
եւ չեն արգելուած։

Սուրբ կրօնի թշնամիների արիւնի հոսումը հաճելի  
է Տէրի առջեւ։ Անհաւատների աւերակների ծուխը Նա  
ընդունում է, որպէս մի ողջակէզ, որից մուխը ուղեղ  
բարձրանում է զէպի Յաւիտենականի աթոռը։ Կոտորե-  
ցէք, որքան կը զօրեն ձեր բազուկները, այրեցէք, որքան  
կարող էք դուք։ Եւ ձեր կոտորածների արիւնի իւրա-  
քանչիւր կաթիլի համբարքով դուք կը ստանաք մի-մի  
հուրի՝ Աստուծոյ ջէննաթի մէջ։

Մեծ է ուղղափառների Աստուածը եւ բացի Նրա-  
նից չը կայ մի ուրիշը։

Եթէ ձեր վեր առած գերիներից՝ ձեր սրտերին  
հաճելի կը լինի ընտրել կնիկներ կամ աղջիկներ հարձ  
անելու մտքով, — եթէ դուք ծառայացնելու համար  
կ'ընտրէք պատանի ստրուկներ ձեռք ընկած գաւուրներից,  
— Աստուած չէ արգելում ձեզ, միայն այն ժամանակ,  
երբ նրանք կ'ընդունեն Խալամը։ Իսկ եթէ հաստատ մնա-  
ցին իրանց մոլորութեան մէջ, ձեզ թոյլ է տրվում  
սպանել։ Զուգաւորութիւնը ուղղափառի մի անհաւատի  
հետ արգելում է Աստուած։ Իսկ ծերերին, թէ նրանք  
կ'են լինէին եւ թէ այր, խնայել չը կայ։ Անհաւատու-  
թիւնը նրանց մէջ ամրացած է իրանց ցամաք ոսկոր-  
ների նման։

Արդար եղէք աւարի բաժանման մէջ եւ ձեզանից  
ամեն մէկը թող չը զրկէ իր ընկերին։ Մի մոռանաք  
Աստուծոյ բաժին հանել ձեր կողոպուտից, որովհետեւ  
Նրա հրեշտակները նոյնպէս պատերազմելու են ձեզ հետ։  
Խնամք տարէք, եթէ մէկը ձեզանից հիւանդ լինի կամ

<sup>1</sup> Հուրի նշանակում է յուրեմական կոյսեր, որ ստանում են Խալամի  
արդարները Աստուծոյ դրախտի մէջ, որպէս վարձատրութիւն. այս հրա-  
շագեղ նիւթաներից աւելի մեծ բաժին ունեն նահատակները։



վերաւոր, որովհետեւ դուք ամենքդ եղբայրներ էք այդ սրբազան դրօշի տակ<sup>1</sup> :

Դեռ եւս երկար խօսում էր Շէյխը, կանգնած իր ամբիոնի վրայ, որպէս իսլամի մարմնացած ոգին, որպէս հալածասիրութեան եւ մոլեռանդութեան մի կենդանի օրինակ: Նրա ձայնը ազդու էր եւ սուր, իսկ բարբառը զուրկ չէր ոգեւորող պերճախօսութիւնից: Ղօրանի աշակերտը, — որի մէջ այնքան բանաստեղծական յափշտակութեամբ երգվում է սրբազան պատերազմը (ջահաթ) իր բոլոր արիւնային գոյներով, — Ղօրանի աշակերտը միայն կարող էր այսպէս ոգեւորել մի վայրենի բազմութիւն մարդկանց մօրթեււ համար:

Շէյխի ճառը մի համառօտ եղբակացութիւն էր այն աստուածեղէն զրքի բովանդակութիւնից, որին հետեւում է ամբողջ մահմետական աշխարհը:

Նրբ վերջացրեց նա, կրկին դարձաւ դէպի բազմութիւնը այս խօսքերով.

“Աստուած ձեզանից ուխտ է սլահանջում, եւ թող ձեզանից ամեն մէկը կատարէ իր երդումը”:

Նոյն միջոցին ամբողջ բազմութիւնը վեր առաւ գեանից մի-մի քար եւ ձգեց հրապարակի վրայ, ուր բարձրացաւ մի ահագին բլուր, որպէս արձան մի սոսկալի ուխտադրութեան: Եւ այս գործողութեան ժամանակ օդը թնդաց հազարաւոր ձայներից, որոնց խառնակութեան միջից պարզ որոշվում էր այս խօսքը. “Եւ թող մեր թաւախը<sup>1</sup> այս քարի նման ձգուած լինի, եթէ հաւատարիմ չը մնանք սուրբ գործին”:

<sup>1</sup> Թաւախ նշանակում է բախտ կամ ամուսնական կապ. նա քանդուած է համարվում, երբ քուրդը նրա անունով երգուելուց յետոյ ուխտազանց է լինում: “Թող իմ կիներ ինձ հառամ (արգելուած) լինի,

Նրբ բոլոր արարողութիւնները վերջացան, Շէյխը կրկին կարգաց օրհնութեան մաղթանք եւ իջաւ իր բեմից: Նա կրկին մտաւ իր վրանը:

Նոյն միջոցին կրկին լսելի եղաւ թմբուկի ձայնը: Ամեն մարդ վազեց իր ձին նստելու, վրանները հաւաքուեցան, եւ մի քանի ժամից յետոյ ամբողջ բանակը պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Նա շարժուեցաւ, երբ Շէյխը իր ձին նստած, կարմիր դրօշակը ձեռին, առաջ ընկաւ:

Այն ժամանակ նրա դէմքը ծածկուած էր մի սպիտակ երեսկարով, որ անհաւասանների աչքերը չը տեսնէին նրա սուրբ երեսը: Աւելի քան տասն հազար քուրդեր հետեւում էին այդ սարսափելի ծերունուն: Գունդերի ետեւից տանում էին մի շարք ուղտերը, որ բարձած էին փոքրիկ թնդանօթներով:

Այսպէս սկսուեցաւ Շէյխ Ջալալէդդինի արշաւանքը դէպի տաճկական Հայաստանը:

## Բ.

Անցաւ մի ամբողջ շաբաթ:

Մի տղամարդ գալիս էր Վանից դէպի Աղբակ բերող ճանապարհով: Դուրս դալով Խօշաբի ձորից, նա արդէն հասել էր Չուխայ-Գադիկ կոչուած լեռնային անցքը: Տղամարդը մենակ էր: Նա գալիս էր ոտով, եւ այնքան արագընթաց, կարծես, մի բան շտապեցնում էր նրան:

Դա մի երիտասարդ էր, որի տարիքը դեռ նոր էին մօտենում երեսունի: Դէմքը գորշ-դեղնադոյն էր, լերկ եւ

ասում է քուրդը, եթէ չը կատարեմ խոստմունքս<sup>1</sup>: Ամուսնական կապը նոյնքան յարգելի է քուրդի համար, որքան մի քաջի համար, որ ունի ասպետական զգացմունքներ:



բոլորովին անմաղ այտերը ցամաք էին, իսկ ծնօտքը զգալի կերպով դուրս էին ցցուած: Բարակ եւ նոյնպէս գորշագոյն շրթուների միջից շատ անգամ երեւում էին ձիւնի պէս սպիտակ առամները, այսպիսի առամներ ունենում են միայն նեղրները: Գլուխը պատած էր սեւ դանդաղոր մազերով, որ թափվում էին արեւից այրուած մերկ պարանոցի վրայ: Ճակատի վրայ երեւում էր մի խոր սպի, որ տալիս էր նրա վայրենի դէմքին մի ահաւորութիւն: Բայց չէ նայելով իր այլանդակութեանը, այդ այրական դէմքը ունէր իր յատուկ գեղեցկութիւնը, որ արտայայտում էր կտրչութիւն, համարձակութիւն եւ կատաղի անգթութիւն:

Նրիտասարդը բարձրահասակ էր, ցամաք եւ նիհար, բայց զարգացած ոսկրներով եւ ամուր մկնային կազմուածքով: Նա հազնուած էր քուրդի ձեւով եւ գտնվում էր կատարեալ զինավառութեան մէջ: Ասիական հրացանը, կեռ թուրը, մի զոյգ ատրճանակներ, թիկունքի վրայ ձգած ահագին երկաթեայ վահանը եւ երկայն նիզակը կազմում էին, կարծես, նրա մարմնի մի-մի անդամները:

Նա գնում էր, եւ երբեմն կանգ առնելով, լի մտախոհութեամբ նայում էր իր շուրջը: Լեռների կանաչազարդ պատկերները չէին, որ զրաւում էին նրան. նա դեղասէր ճաշակ եւ բնութեան հրապուրանքը զգալու ընդունակութիւն չուներ: Բայց նա զարմանում էր, տեսնելով, որ իր ծանօթ լեռները բոլորովին դատարկ էին: Տասն օր հաղիւ կը լինէր, որ նա մի անգամ եւս անցել էր նոյն ճանապարհով, այն ժամանակ այսպէս չէր, այն ժամանակ բոլորովին ուրիշ տպաւորութիւն էին գործում այն գեղեցիկ լեռները: — Խոտաւէտ արօտներում արա-

ծում էին ոչխարների հօտեր, ձորերի մէջ կազմուած էին խաշնարած հայերի վրաններ, եւ հովիւների սրինգը հեռուից հնչվում էր թռչունների առաւօտեան ձայների հետ: Այն ժամանակ հովիտների եւ լեռնադաշտերի վրայ հողագործ հայը, իր սովորական երգը երգելով, վարում էր, եւ կամ հնձում էր: Մի խօսքով, մարդը բնութեան հետ միանալով, անընդհատ եւ քաղցր աշխատութեան մէջ էին: Իսկ այժմ: — Այժմ ամեն գործ դադարել էր. ոչ մի շունչ չէր երեւում. նոյն իսկ ճանապարհը, որով գնում էր նա, թափուր էր մնացած յաճախ անց ու դարձ անող քարաւաններից: Ի՞նչ էր պատճառը: Կարծես, մի չար եւ ոչնչացնող ձեռք անցել էր այն ընդարձակ տարածութեան վրայով, իր յետքից թողնելով աւերակներ եւ ամայութիւն...

Նրիտասարդը զգաց սարսուռի նման մի բան, եւ նրա արեւից այրուած գորշ դէմքը գունաթափուելով, ստացաւ մոյգ դեղնապղնձի գոյն: Նրկիւղը չէր, որ այնպէս վրդովեց նրան, երկիւղ ասած բանը ծանօթ չէր նրա երկաթի սրտին: Բայց նրա մէջ վառուեց մի կիրք, որ աւելի նման էր կատաղի բարկութեան:

Ճանապարհը այժմ ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում էր դէպի սարի զառիվերը. գազաթից երեւացին նրան նիզակի սուր-սուր ծայրեր. եւ փոքր ինչ ցած իջնելով, տեսաւ, որ իր առջեւը գնում էին մի խումբ ձիաւորներ: Նրեւի, ձիաւորներն նոյնպէս տեսան նրան, որովհետեւ կանգնեցին, մինչեւ կը հասնէր մենաւոր ճանապարհորդը: Բայց դեռ մէջտեղում բաւական տարածութիւն կար:

Նրիտասարդի ուշադրութիւնը գրաւեց մի բան. նա նկատեց, որ ձիաւորները քրդեր էին, նրանք երգում էին



եւ ուրախ էին, որպէս կռուողներ, որ վերադառնում էին յաղթանակով: Նրա աչքերը այնքան սովորած էին այս բարբարոս ժողովրդի ցոյցերին, որ ամենաչնչին երեւոյթից կարող էր շատ բաներ գուշակել: Այս պատճառով արիւնը զարկեց նրա գլխին, երբ տեսաւ, որ նրանց նիզակների ծայրերին դրօշակների նման ծածանվում էին շորի կտորներ: Հմուտ աչքը առաջին անգամից կարող էր նկատել, թէ դրանք կնոջ հագուստներ էին, եւ այն ստորին հագուստը, որ համեստութիւնը միշտ հեռու է պահում տղամարդի աչքերից...

Դա բարբարոսութեան ամենախայտառակ մի ցոյցն է, որ պարկեշտ կանանց ողջախոհութիւնը բռնաբարելուց յետոյ, թերահաս կոյսերի անմեղութիւնը խախտելուց յետոյ, չարագործը, որպէս պարծանք իր անբարոյականութեան, որպէս յաղթանակի նշան, — նրանց ամօթոյ ծածկոյթը ցցում է իր նիզակի գլխին, ցոյց տալու համար, թէ ինքը խղճի եւ ազնուութեան դէմ մի գործ է կատարել...

Նրիտասարդը իր վրդովմունքը զսպելով, մօտեցաւ խմբին, եւ պահպանելով իր ծպտեալ դերը, տուեց սովորական ողջոյն քրդերէն լեզուով.

— Բարի ճանապարհ:

— Բարի ճանապարհ եւ քեզ, պատասխանեցին նրան, հարցնելով.

— Որտեղից այսպէս:

Նրիտասարդը իր նիզակը նեցուկ տալով մարմին կանգնեց, պատասխանելով.

— Վանից:

— Ի՞նչ կայ. ո՞ւր էք գնում:

— Գնում եմ Բաշ-Նալա: Փաշայից նամակ եմ տանում մուգ իրի:

Քրդերը խորհրդաւոր կերպով նայեցին մինը միւսի երեսին:

— Դուք ո՞ւր էք գնում, հարցրեց երիտասարդը:

— Գաւուրների դէմ, ասաց նրանցից մէկը. — Շէյխը կանչել է: Գնում ենք կռուելու:

— Որպէս երեւում է, դուք ձեր առաջին քաջութիւնը փորձել էք այդ ողորմելի շորի կտորների վրայ... ասաց երիտասարդը հեգնական ծիծաղով:

— Այդ մի փոքրիկ որս էր, որ պատահեց մեզ ճանապարհի վրայ. մեր եղբայրները այրել էին մի հայոց դիւղ, բայց կանայք փախել էին մերձակայ լեռան վրայ...

— Նրանցից պրծան, ձեր ձեռքը ընկան... կտրեց երիտասարդը քրդի խօսքը:

Քրդերից մէկը կասկածաւոր կերպով հարցրեց.

— Դու ո՞րտեղացի ես:

— Սիպան լեռներից, Հէյդարանլի ցեղին եմ, ասաց երիտասարդը նոյն ցեղին յատուկ բարբառով:

— Հէյդարանլիները չե՞ն գնում:

— Նրանք պիտի գնան իրանց Շէյխի առաջնորդութեամբ. Հէյդարանլին չէ խառնվում Շիկակների, Ռաւանդների եւ Բիլբաստների հետ<sup>2</sup>, որոնց պիտի տանէ Շէյխ Ջալալէզզինը:

Հպարտ Հէյդարանլի խօսքերը թէեւ բաւական վերաւորական էին իր խօսակիցներին, որոնք Ռաւանդների ցեղին էին պատկանում, բայց նայելով նրա, որպէս մի

<sup>1</sup> Աղբակ դաւառի բերդաքաղաքն է:

<sup>2</sup> Քրդերի ամենաբարբարոս ցեղերի անուններ են, որ բնակվում են Պարսկաստանի սահմանների վրայ:



պաշտօնական մարդու վրայ, որ փաշայից նամակ էր տա-  
նում Բաշ-Նյալայի մուգիրին, ոչինչ չը պատասխանեցին:

Երիտասարդը խօսքը շուռ տալով, եւ որպէս ինքն  
իրան խօսելով, ասաց.

— Այդ ի՞նչ վատ երկիր է, ինձ առաջին անգամն  
է պատահում այստեղ լինել. միթէ այս սարերում հո-  
վիւններ եւ գիւղեր չը կան. սովից մարեցայ. ոչինչ չեւ  
գտնում ուտելու:

— Կային, պատասխանեցին նրան, — այս կողմե-  
րում Ֆլայներ (Հայեր) էին բնակվում, բայց մի օր  
առաջ անցել են այստեղից Հարբինները<sup>1</sup> եւ ոչինչ չեն  
թողել:

Երիտասարդի միջին դէմքը աւելի մռայլուեցաւ, եւ  
աշխատելով սառնասիրտ ձեւանալ, հարցրեց.

— Ուրեմն դուք դատարկաձեռն մնացիք:

— Աստուած ողորմած է, ասացին նրան, — մինչեւ  
Բայազէդ հասնիլը որսեր շատ կը պատահեն...

— Թող Աստուած յաջողէ... պատասխանեց երի-  
տասարդը եւ կամենում էր շարունակել իր ճանապարհը:

Բրդերից մէկը հանեց իր ձիու թամբին կապած  
խուրճինից մի կտոր հաց եւ պանիր, տուեց նրան,  
ասելով.

— Կեր, դու ասացիր, որ քաղցած ես, մինչեւ  
Բաշ-Նյալա դեռ շատ պիտի գնաս:

Տղամարդը շնորհակալութիւն յայտնեց: Աւաղակների  
խումբը հեռացաւ:

Այժմ նա հասկացաւ այն ամայութեան պատճառը,  
որ քանի ընդհատվում էր նրան. այժմ նա

<sup>1</sup> Բրդերի մի վայրենի ցեղ է, որ բնակվում է Տիգրիսի վերին ճիւղ-  
երի մօտ եւ տարածվում է մինչեւ Մուսուլ:

գիտէր, թէ ինչ էր պատահել իր անցած երկիրների  
վրայ:

Բրդից ստացած կերակուրը նա մի կողմ ձգեց եւ  
շարունակեց գնալ: Իրաւ, նա քաղցած էր. ամբողջ օրը  
ոչինչ չէր կերել, բայց քաղց չէր զգում: Լինում են  
ընդհանր, որ մարդ կերակրվում է իր սիրտը մաշելով ու  
սպառելով. — երիտասարդը այդ դրութեան մէջ էր:

Գ.

Արեւը մտնելու մօտ էր, երբ մեր յոգնած ճանա-  
պարհորդը հասաւ մի տեղ, ուր ճանապարհը ճիւղաւոր-  
վում էր. աջ ճիւղը տանում էր դէպի Բաշ-Նյալա, իսկ  
ձախը դէպի Բարդուղիմէոս առաքեալի վանքը: Մա ընտրեց  
վերջինը:

Արեւի վերջալոյսը ոչ մի ժամանակ այնպէս գեղեցիկ  
չէր զարդարել ամպերը, որպէս այն երեկոյ. եւ լեռնային  
օդը իր փափուկ թարմութեամբ ոչ մի ժամանակ այնքան  
կազդուրիչ չէր եղել, որպէս այն գիշեր: Բայց երիտա-  
սարդը ոչինչ չէր զգում, որովհետեւ իր սրտի եւ արտա-  
քին աշխարհի մէջ ամենեւին առնչութիւն չը կար: Մա  
շարունակում էր գնալ, ինքն իր մէջ կենտրոնացած. եւ  
մի աներեւոյթ զօրութիւն մղում է նրան առաջ...

Մութը սկսել էր փոքր առ փոքր թանձրանալ եւ  
գիշերային աստղերը վառվում էին հիանալի զուարթու-  
թեամբ: Օդը անշարժ եւ խաղաղ էր: Այդ այն ժամն  
էր, երբ նոյն լեռների վրայ սովորաբար լսելի էին լինում  
արօտից դարձող ոչխարների բառաւորները, որոնց խուլ  
արձագանքը զարթեցնում է այնքան գեղեցիկ յիշողու-  
թիւններ հովուական կեանքից: Իսկ այն գիշեր ոչինչ չէր

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ





լավում. ամեն տեղ տիրում էր մեռելային անդորրութիւնը:

Բաւական ճանապարհ անցել էր, երբ սկսեց նշմարել տեղ-տեղ հրեղէն կէտեր. նրանք երեւում էին խաւարի մէջ շատ հեռուից, երբեմն ընդարձակվում էին, երբեմն փոքրանում էին եւ երբեմն դէպի վեր էին բարձրացնում վիշապների նման գալարվող բոցեղէն սիւներ: Յանկարծ բոլորովին հանգչում էին, եւ աւելի զօրութիւն ստանալով, հրային հոսանքը տարածվում էր դէպի ամեն կողմ:

Մա կանգնեց եւ մի քանի րոպէ անշարժ նայում էր այս սարսափելի տեսարանին: Ի՞նչ էր պատահել: Մա մտածում էր, թէ այրվում են խոտի դէղեր: Բայց նրան այնքան ծանօթ էին իր շրջակայքը, որ ինքն եւս կասկածում էր իր կարծիքի մէջ. նա գիտէր, որ խոտը այդպէս վաղ չէ հնձվում այս կողմերում: Մա գիտէր, որ այն ձորերում, ուր այնպէս կատաղի կերպով ճարակում էր հրդեհը, կային միայն շատ թուով հայոց փոքրիկ եւ մեծ գիւղօրայք...

Նրիտասարդը չը մօտեցաւ ոչ մէկին. նա գտնվում էր մի այնպիսի իրան կորցրած գրութեան մէջ, որ երազի պէս բոլոր սարսափելի տեսարանները գալիս ու անցնում էին նրա աչքերի առջեւից:

Մա դուրս եկաւ մեծ ճանապարհից եւ բարձրացաւ մի բլուրի վրայ, որ պատած էր փոքրիկ թուփերով ու մնացածներով: Այն գիշեր էր: Մա առաջին անգամից նայեց դէպի աստղազարդ երկինքը եւ տեսաւ, որ «Տրդատի խաչը»<sup>1</sup> ուղիղ կանգնած էր զենիթի վրայ: Մա նստեց մի քարի վրայ, որ փոքր ինչ հանգստանայ: Մի կողմից

<sup>1</sup> Մի համատեղութեան անուն է:

քաղցը, միւս կողմից յոգնածութիւնը, բոլորովին սպառել էին նրա ուժերը: Բլուրի բարձրութիւնից հրեղէն կոյտերը այժմ աւելի պարզ երեւում էին լեռնային տարածութեան վրայ: Մա դեռ նայում էր առաջին սառնասրտութեամբ:

Միա ականջին դիպան մի քանի անոռոշ ձայներ. երեւում էր, բլուրի ստորոտից անցնում էին մարդիկ:

— Ո՞ւր գնանք... Տէր Աստուած...

— Գնանք... մի տեղ կը հասնենք...

— Ծնկներս գողում են... երեսաս մարեղու վրայ է...

— Տուր ինձ երեսան:

— Աղջի, ինչո՞ւ յետ մնացիր:

— Մայրիկ, քարերը ծակում են ոտներս:

Ձայները լռեցին:

Բոպէական լռութիւնից յետոյ ընդհատուած խօսակցութիւնը կրկին շարունակուեցաւ.

— Դեռ այրվում է... ան, ինչպէս այրվում է...

— Կնի՛կ, երեսներքիդ հոգսը քաշիր... լսւ է, որ պրծանք...

— Գլխիդ արիւնը էլի սկսեց գնալ... դու օրօրվում ես, այ մարդ...

— Վնաս չունի... փաթոթը արձակուեցաւ...

— Բե՛ր, կապեմ:

— Գնանք... փախչենք... Ժամանակ չէ...

Ձայները կրկին լռեցին:

Մերձակայ հրդեհը այնպէս սաստիկ բոցավառուեցաւ, որ փայլակի արագութեամբ լուսաւորեց բլրի ստորոտը: Լոյսը բաց արեց մի ցաւալի տեսարան: Խօսողը մի գիւղացի էր իր կնոջ հետ. նա տանում էր իր գրկում մի փոքրիկ



երեխայ. արիւնը նրա ճակատից թափվում էր երեսի վրայ, եւ այնտեղից կաթկաթում էր երեխայի գլխին: Նրա կողքին գնում էր կինը, եւ ձեռքից բռնած տանում էր մի փոքրիկ աղջիկ: Ամուսինները երկուքն էլ ուժաթափուած, հաղիւ կարողանում էին ընթանալ:

Դաւարը կրկին տիրեց շրջակայքը: Չայները կրկին լսելի եղան:

- Ա՛խ. ինչպէս կոտորում էին...
- Ա՛խ, ինչպէս այրեցին...
- Ոչինչ չը թողեցին...
- Հիմայ ո՞ւր գնանք... Աստուած...
- Մայրիկ, ես հաց եմ ուզում...
- Մի՛ լար, հիմայ...
- Մայրի՛կ...

Չայները լռեցին:

Շատ անգամ, շատ մարդկանց վրայ, մի թշուառ երեւոյթ, որ պէտք է յարուցանէր տխուր զգացմունքներ, — ընդհակառակն զգուանք է պատճառում, զարթեցնում է խիստ դառն ատելութիւն: Նոյն տպաւորութիւնը ունեցաւ մեր ճանապարհորդի վրայ իր տեսածը: — Մի կողմում հրդեհը լափում էր խաղաղասէր շինականի խրճիթները, մարդիկ կենդանի թաղվում էին իրանց հրային գերեզմանի մէջ, եւ կրակից ազատուածը իր բնակարանի մօտ ընկնում էր բարբարոսի սրից, — միւս կողմից, նա լսում էր մի արիւնաթաթախ հօր եւ կիսաշունչ մօր ցաւալի խօսակցութիւնը, լսում էր զաւակի լացը եւ մրմունջը, տեսնում էր անբախտացած ընտանիքի յուսահատական փախուստը, եւ ինքը մի դիւական սառնասրտութեամբ բլուրի բարձրութիւնից նայում էր, եւ կարծես նրա դժոխային շրթունքից դուրս էին թռչում

այս ճակատագրական խօսքերը. «Դուք արժանի՛ էք ձեր վիճակին, որ ինքներդ էք պատրաստել ձեզ համար... Նա մեղաւոր չէ, որ այրում է եւ մորթում է»...

Դա ատելութեան ամենասարսափելի ձայնն է, որ բղնում է սիրելուց, դա եղբոր ատելութիւնն է, որ ծագում է եղբորը ուղղելու զգացմունքից, թէ ինչո՞ւ, նա պատրաստ չէ կեանքի եւ գոյութեան համար մրցելու:

Այս տեսակ ատելութիւնից առաջ է գալիս այն ազնիւ բարկութիւնը, որով մարդ ծայրայեղութեան է հասնում, եւ նա մի խիստ պատգամախօսի նման որոշում է մի ժողովրդի վիճակի սահմանը, երկու հակառակ կէտերի վրայ դնելով նրան, — կամ մահ էւ կամ կեանք: «Ով չէ հասկացել, կամ չէ ուզում հասկանալ ապրելու պայմանները, ասում է նա, կեանքի իրաւունք չունի: Այս պայմանները այնքան փոխվում են, որքան փոխվում են նրանց պահանջները. — երբ հարկաւոր է խելք բանեցնել, խելքին զօր տալու է, իսկ երբ պէտք է սուր, մարդ պիտի պատրաստ ունենայ նրան իր ձեռքում: Մարդկային կեանքը ներկայացնում է մի սարսափելի կռուի հանդիսարան, ով որ ընդդիմադրութեան շնորհք չունի, նա պիտի ընկնի, անհետանայ, ոչնչանայ»...

Բայց մեր ճանապարհորդի վրդովմունքը առաջ էր գալիս այս տեսակ խորին քննութիւններից. նա կեանքի փրկութեան հետ ծանօթ էր: Բացատրում էր մարդկային կեանքը, հիմնուելով բնութեան ամենապարզ երեւոյթների վրայ: Նա մտածում էր, երբ գառին վիճակուել է դայլի հետ միասին կենցաղավարել, ինքն էլ պէտք է աշխատի դայլի ատամներ ունենալ, եթէ չէ ցանկանում կատաղի դադանին կերակուր դառնալ:



Հանդամանքները ձգել էին նրան մի այնպիսի վիճակի մէջ, որ ինքն յակամայից դարձել էր դայլ, դայլն բոլոր անգթութեամբ: Մանկական հասակում ընտանիքը հալածեց նրան. նա արտաքսուեցաւ հայրենական անակից, որպէս անառակ որդի: Իր համազգի հասարակութեան մէջ նոյնպէս նա ընդունելութիւն չը գտաւ. ամեն մարդ սկսեց խորշիլ նրանից, որպէս ժանտախտից. այնուհետեւ մնում էր նրան անձնատուր լինել գէտքերի բերմունքին, եւ նա դարձաւ մի արկածախնդիր թափառական, իսկ վերջը՝ — մի անգութ աւազակ, որ ուխտել էր պատժել մարդկանց, որովհետեւ մարդիկ պատժեցին նրան:

Որպէս աւազակ նա դարձեալ մնաց միշտ աղնիւ: Նա չը կորցրեց իր առիւծի վեհութիւնը, որ չէ սիրում յարձակուիլ տկար կամ վատուժ կենդանիների վրայ, որ իր որսածի մեծ մասը թողնում է մանր գաղաններին ուտելու համար...

Ամբողջ տաս տարի հայրենիքից հեռացած այդ թշուառականը, կրկին վերադարձաւ այնտեղ, երբ լսեց նրա վտանգը: Նա չեկաւ հայրենիքը փրկելու համար, որովհետեւ գիտէր, որ իր նման շատերը նրան փրկել չէին կարող, երբ ինքն իրան փրկելու ընդունակութիւն չունէր: Նա եկաւ փրկելու մի գեղեցիկ արարած, որին միայն սիրում էր, եւ որը միայն էր ամբողջ աշխարհի մէջ, որ սիրում էր այն մարդուն, որին բոլորը ատում էին: — Այդ էր նրա մտիթարութիւնը: Բոլոր աշխարհի մէջ հանգստութիւն, դադար եւ իր գլուխը դնելու մի անկիւն չունեցող անբախտը ունէր մի կնոջ ջերմ սիրտ, ուր ապրում էր նա, շնչում էր եւ այնտեղ մոռանում էր իր կեանքի դառնութիւնները, թէեւ տաս տարուց աւել էր, որ չէր տեսել նրան:

Ահա ինչ էր պատճառը, որ նա այնքան անդդայ էր դարձել դէպի իր շրջակայքը կատարուող գործողութիւնները, եւ որպէս մի չար դեւից հալածուելով, ակամայ մղվում էր դէպի առաջ, ոչ մի տեղ հանգիստ չառնելով: Բայց բնութիւնը պահանջում է իրը. քանի որ էր, որ նա ամենեւին քնած չէր, մի քանի օր շարունակ նա ճանապարհի վրայ էր դնւում. նրա ուժերը սպառուել էին եւ նա սկսել էր թուլանալ: Եւ երբ նա բարձրացաւ բլուրի վրայ, նստեց այնտեղ, որ մի փոքր հանգստանայ, յանկարծ ակամայ կերպով նրա գլուխը ծանրացաւ, աչքերը փակուեցան եւ ընկաւ փափուկ խոտերի վրայ: — Դա քունն չէր, այլ մի տեսակ թմրութիւն, որ տիրում է մարդուն եւ արթնութեան ժամանակ, երբ նա սաստիկ տանջուած է լինում, թէ բարոյապէս եւ թէ՛ ֆիզիկապէս:

Դ.

Արուսեակը դեռ նոր էր բարձրացել հորիզոնի վրայ, դեռ նոր արշալոյսի եղերաբիծը սկսել էր կարմրել, երբ նա արթնացաւ: Երիտասարդը ամբողջ մարմնով դողաց, երբ նկատեց, որ կորցրել է գիշերի մեծ մասը, երբ կարող էր բաւական ճանապարհ կտրել: Նա շտապով վերցրեց հրացանը եւ նիզակը, շարունակեց իր ուղին:

Անցնելով Աղբակայ լեռնադաշտերը, նա տեղ-տեղ նկատում էր հայոց զիւղօրայք, որ դեռ ծխում էին վաղորդեան մառախուղի միջեց: Այս ծուխը նման չէր այն ծուխին, որ առաւօտները վեր է բարձրանում խաղաղասէր շինականի խրճիթի երգիքից. դա մի չարագուշակ ծուխ էր, որ երբեմն խառնվում էր հրեղէն բոցերի հետ: Նա անցաւ գիւղերից մէկի մօտով եւ տեսաւ, որ



գետնափոր տնակները բոլորովին մոխիր էին դարձել, եւ այստեղ ու այնտեղ ընկած էին արիւնով ներկուած, կամ սարսափելի կերպով այլանդակուած դիակներ: Մազգաց բոլոր զարհուրանքը այն երեւոյթներին, որ նոյն գիշերը իր համար մնացել էին անբացատրելի: — Կրակները, որ նրան գիշերային խաւարի մէջ սարսափեցնում էին, հայոց հրդեհուած գիւղօրայք էին:

Այս սոսկալի տեսարանները, որ ամեն մարդու վրայ կարող էին ունենալ կայծակի ներգործութիւն, նրան շատ հասարակ երեւացին. կարծես, նա գիտէր, թէ այսպէս պէտք է լինէր, կարծես, նա առաջուց որպէս մարդարէ հոգեւոյ աչքերով տեսել էր բոլոր զարքը իր արիւնալի պատկերներով: Եւ առաջուց երկար կարդալով իր երեմիականը, նրա սիրտը կոշտացել էր, նրա աչքերում արտասուք չէր մնացել այժմ կատարուած իրողութեան վրայ ողբալու: Եւ այս պատճառով նա, կարծես, անտարբերութեամբ էր նայում այն աւերակներին, այն կոտորածի կոյտերին, ուր կին, աղջիկ, երեխայ, ծեր եւ տղամարդ, ընկած էին մինը միւսի վրայ:

Ջարմանալի բան է մարդկային սիրտը. շատ անգամ նմանում է մի անսահմանութեան, որ ամփոփում է իր մէջ ամբողջ տիեզերքը, շատ անգամ նմանում է մի լեքը անօթի, որի մէջ գտնուած նիւթը ընդգիմահարում է, տեղիք չէ տալիս մի ուրիշին զետեղուելու: Եւ աւելի բացասական է լինում նա, երբ լցուած է լինում սիրով: Ամեն մի նոր ներմուծութիւն գատարկ տեղ է որոնում, բայց նրա սիրտը գատարկ չէր...

Մա կրկին նայեց ծխացող աւերակներին եւ անցաւ: Իր ճանապարհի վրայ շատ անգամ հանդիպում էին այնպիսի ծխացող աւերակներ, շատ անգամ երեւում

էին նրան մոխիր դարձած գիւղեր եւ շատ անգամ նա տեսնում էր՝ կամ բոլորովին անշնչացած, կամ իրանց տաք արեան մէջ թաւալուող դիակներ, — եւ այդ բոլորը նրա վրայ միայն ըստական ազդեցութիւն էր անում:

Արշալոյսը այժմ սկսել էր աւելի պայծառ բոցավառուել եւ արեւի կարմիր-ծիրանագոյն շառաւիղները դեռ նոր ցորանում էին ձիւնի պէս սպիտակ ամպերի վրայ, տալով նրանց քրքումի գոյն: Բայց ձորերի մէջ տակաւին լոյս չը կար: Երիտասարդը դեռ շարունակում էր իր ճանապարհը զարտուղի շաւիղներով: Սարի այծը միայն կարող էր անցնել այն սարսափելի ելեւէջները, այն նեղ կիրճերը եւ այն ժայռոտ գահավէժները, որոնց միջով գնում էր նա: Մա զիմում էր ուղղակի դէպի Երեսան գիւղը: Վերջապէս հասաւ այնտեղ: Կրակը եւ սուրը ոչնչացրել էր թէ մարդ եւ թէ բնակութիւն: Այստեղ նա երկար շրջում էր ընկած դիակների մէջ, եւ կարծես, մի բան որոնում էր նրանց մէջ: Յետոյ նա կանգ առեց մի ծխացող խրճի առջեւ, եւ խորին լռութեամբ նայում էր նրա վրայ: Այս տնակի մէջ անցել էր նրա մանկութիւնը, այստեղ էին բնակվում նրա ծնողքը, քոյրերը եւ եղբայրները, որոնք այժմ չը կային... Այս ցաւալի տեսարանը քամեց նրա աչքերից մի քանի կաթիլ արտասուք, որոնք զլորուեցան գունաթափ երեսի վրայ:

Արտասուքը մի զարմանալի արտայայտութիւն է հոգեկան կրքերի: Որպէս տխրութիւնը, նոյնպէս եւ ուրախութիւնը արտասուք ունեն: Բայց սարսափելի է լինում այն արտասուքը, որ դուրս է ցայտում բարկութիւնից, — երիտասարդինը այդ տեսակիցն էր: Այդ տեսակ ար-



տասուքը նման է երկնքի արտասուքին, որ խառն է լինում մրրկի, որոտման եւ կայծակների հետ...

Մա նկատեց այրուող խրճիթի մօտ մի քանի իրեղէններ, որոնց գույնէ աւարառուն անձեռնահաս լինելով, թողել էր այնտեղ: Իրեղէնները բոլորը ծանօթ էին նրան: Ահա այն դորդի վրայ շատ անգամ նստում էր իր ծերունի հայրը... Ահա այն վերմակի տակ շատ անգամ քնել էր ինքը... Ահա այն տաշտի մէջ խմոր էր հօւնցում իր մայրը... Ահա այն մեծ թասը, որի մէջ իր քոյրը կթում էր ոչխարները... Մի խօսքով նրանց ամեն մէկը զարթեցնում էր իր մէջ հին յիշատակներ: Մա մօտեցաւ եւ սկսեց մին մին վեր առնել եւ ձգել խրճիթի այրուող կրակի մէջ, կարծես, նրա բոցերը սաստկացնելու մտքով:

Սոյն միջոցին վրայ հասան երկու զինուորուած քուրդ ձիաւորներ, որոնք իրանց ետեւից քարշ տալով, բերում էին մի քանի ուրիշ ձիաներ:

— Ինչո՞ւ ես այրում, ասաց նրանցից մէկը, — մենք եկել ենք տանելու. առաջ զրապտներ չունէինք, հիմա բերել ենք:

— Էլե՛կը տանէք, պատասխանեց երիտասարդը սառն կերպով. — դեռ շատ է մնացել: Ի՞նչք ցած:

Քուրդերը ձիերից ցած իջան եւ կամենում էին իրանց բեռները պատրաստել:

— Մի՛ մօտենաք, ես պէտք է այրեմ զրանց, գոռաց երիտասարդը:

— Ինչո՞ւ:

— Ձեզ էլ զրանց հետ կ'այրեմ, եթէ թոյլ չը տաք:

— Դո՞ւ:

— Նա:

Սոյն բոլորում երիտասարդի ծանր սուրբ իջաւ քրդերից մէկի զլխին, իսկ միւսի կուրծքի մէջ որոտաց նրա ատրճանակը: Երկուսն էլ ընկան: Երիտասարդը խլեց դիակները եւ ձգեց կրակի մէջ: Այնուհետեւ նա բռնեց նրանց ձիերից մէկը, որն աւելի լաւն էր, նստեց եւ սկսեց քշել:

Յայտնի չէ, թէ ինչո՞ւ երբ նա մի փոքր հեռացաւ, կրկին ցած իջաւ ձիուց, նրան արձակեց եւ ինքն դարձեալ սկսեց ոտով գնալ: Երեւի այդ այն պատճառով էր, որ ձիով չէր կարող անցնել այնտեղի նեղ եւ դժուարին ճանապարհներով, որ ընտրել էր իր համար:

Բաւական հեռանալով իր հայրենական դիւղից, մի լեռնադաշտի վրայ նրա ուշադրութիւնը գրաւեց մի մթին կէտ, որ ազատ կերպով նշմարվում էր նոր բարձրացող արեգակի ճառագայթների միջով: Մա շատ հեռու էր: Ոլբան մօտենում էր երիտասարդը, այնքան յիշեալ առարկան աճում եւ աւելի մեծ ծաւալ էր ստանում: Կարծես, նա կախ էր ընկած օդի մէջ եւ բաւական բարձր էր երկրի մակերեւոյթից: Մա ծռեց իր ուղին դէպի այն կողմը: Երբ փոքր ինչ եւս մօտեցաւ, նրանց թիւը բազմացաւ, որոնք այժմ նման էին այն խրտուիլակներին, որ ցցում են երկայն ձողերի զլխին եւ տնկում են հասունացած արտերի կամ սեխանոցների մօտ, որ թռչունները, խողերը եւ արջերը չը փչացնեն նրանց:

Բայց յիշեալ խրտուիլակներից ոչ թռչունները եւ ոչ գազանները չէին վախենում: Մա տեսնում էր, թէ որպէս դիշակեր ագռաւները, անդղները եւ մինչեւ անգամ երկջուտ կաջաղակը ուրախ-ուրախ թռչեցներ էին դործում, ճախրում էին, պառցաներ էին անում, իջնում էին:



նրանց վրայ եւ կրկին բարձրանում էին օդի մէջ: Այնտեղ եւ շնագայլն ու բորենին ուրախական ձայներ էին հանում: Երեւում էր, որ այդ անասունները բոլորել էին մի ձօն սեղանի շուրջը:

Տեսարանը պարզուեցաւ, երբ նա բոլորովին մօտ գնաց. երկայն ձողերի զլխին շամփրած մարմինները մարդկային դիակներ էին, որոնց կենդանի բարձրացրել էր այնտեղ բարբարոս ձեռքը, իսկ այժմ մեռած էին: Նրանք թուով երեք էին, որոնց մի կողմ թեքուած գլուխներից սարսափած ճանապարհորդը ճանաչեց երկու քահանայի եւ մի վարդապետի երեսները: Եղեռնագործութեան ամենաոսկալի օրինակն է այդ, որ ստեղծել է մահմետականի անդթութեան հանձարը, — կենդանի մարդիկ զազուխի զարկելու... Զողերի շուրջը ածած էին կոտորած դիակներ, որոնք զազանների զիշատելուց աւելի այլանդակուելով, սարսափ էին ձգում նայողի վրայ:

Յանկարծ երիտասարդը լսեց մի խուլ մրմունջ, որ նման էր այն դառն հառաչանքին, որ արձակում է մարդ մահուան տագնապի մէջ տանջուած լոպէներում: Նա շտապեց դէպի ձայնը: Գետնի վրայ նշմարվում էին արեան կաթիլների հետքեր, որոնք հազիւ տեսանելի շաղի նման տանում էին դէպի այն կողմը: Տասը քայլ հազիւ փոխել էր նա, յանկարծ ծնկները թուլացան, դետնին փռուեցաւ եւ գրկեց մի ալեգարդ ծերունի: Մի քանի լոպէ մեռնողը եւ կենդանին մնացին անմեռունչ:

Մեռնողը աւելի շուտ ոգի առաւ, քան թէ կենդանին, եւ առաջինը խօսեց իր թոյլ, դողդոջուն ձայնով. «Հիմայ, Տէր, առ հոգիս, որովհետեւ մեռնում եմ որդուս գրկի մէջ»:

Երիտասարդը դեռ անշարժ էր:

Ծերունին աւելացրեց.

«Տասը տարի կորած որդիս այժմ կը փակէ հօր աչքերը»:

Երիտասարդի գլուխը դեռ այնպէս ընկած էր ծերունի հօր կուրծքի վրայ: Հայրը իր թոյլ ձեռքով բարձրացրեց այն սիրելի գլուխը եւ ասաց.

«Սարհատ, աննման Սարհատ, թող օրհնեմ քեղ, յետոյ մեռնեմ»:

— Բայց առաջ դու լսիր որդուդ անէծքը, եւ յետոյ մեռիր, ասաց երիտասարդը զայրացած ձայնով: — Այո, տասը տարի կորած որդիդ այժմ պէտք է փակէ հօր աչքերը, որին գտնում է արեան մէջ շողախուած: Բայց ո՞վ եղաւ որդուդ կորչելու պատճառը, եթէ ոչ ինքը հայրը: Նա անառակ որդի չէի, ես փչացնող եւ արբեցող չէի, — ես միայն սիրում էի զէնքեր, սիրում էի ձի, սիրում էի որսալ: Իմ զուարճութիւնները համեստ էին: Իսկ այդ բոլորը ատում էիր դու: Ինձ դու ձգեցիր վանքը եւ կամենում էիր ինձանից ճգնաւոր, աղօթող պատրաստել: Այնտեղից ես փախայ: Այնուհետեւ խովն ու բահը, գերանդին ու մանգաղը, — այդ բաները առաջարկեցիր ինձ: Նա ընդունեցի, բայց առանց հրացանս թողնելու, որովհետեւ տեսնում էի, որ քուրդը յափշտակում էր մեր վարուցանքը. մի բանով պէտք էր պահպանել նրան: Բայց դու ինձ խրատում էիր բարի լինել եւ բարութեամբ պատասխանել չարին. դու ինձ ասում էիր. «մենք հայեր ենք, մեր գլուխը պէտք է միշտ ցած ծռած լինի, մեր լեզուն միշտ մունջ պէտք է լինի եւ մեր ձեռքը պէտք է, որ բարձրանայ օտարի գլխի վրայ»... — Դրանք էին քո քարոզները: Բայց ես տեսնում էի, քանի որ գլուխս ծռում եմ, աւելի շատ



են ծեծում. քանի որ լեզուս մունջ կամ պահում, աւելի շատ են հայհոյում. — ես տեսնում էի, երբ ձեռք չեմ բարձրացնում, եղած-չեղածս խլում տանում են, եւ ես մնում եմ աղքատ ու քաղցած: Բայց դու ամեն ինչ Աստուծու վրայ էիր ձգում, եւ պատուիրում էիր ինձ համբերել... Ես սկսեցի չը հաւատալ Աստուծուն, երբ տեսնում էի, որ Նրա աչքերի առջեւ ամեն տեսակ չարագործութիւնների կատարվում են, եւ Նա միշտ մնում է անտարբեր: Դսկ քո բարկութեան չափն անցաւ. դու արտաքսեցիր հօր տնից անառակ որդուն, որ իր պապերի սովորութիւններով չէր գնում, որ աստում էր ստրկական խոնարհութիւնը, որ չէր սիրում իր հալածողի ոտները լիզել...

— “Բայց դու ուր գնացիր նրանից յետոյ, եւ ի՞նչ էիր շինում”, հարցրեց վշտացած հայրը:

— Ես այնուհետեւ դարձայ մի թափառական որսորդ: Բայց անասունների սպանելու եւ մարդիկ մորթելու մէջ մի քայլ միայն կայ, — որդիդ յետոյ դարձաւ աւազակ եւ սկսեց մարդիկ կոտորել... Եւ ինչո՞ւ չը կոտորէի, ինչո՞ւ չը յափշտակէի, երբ տեսնում էի, այն մարդիկը որ նոյնն են գործում, աւելի բախտաւոր են, աւելի յարգելի են: Եւ որ ընդհակառակն, տեսնում էի, այն մարդիկը, որ բարի են, որ մի մրջիմ անգամ սպանելու սիրտ չունեն, որ աւազակ չեն, — նրանք թշուառ են, եւ ոչ իրանց ընտանիքի, եւ ոչ իրանց կայքի, եւ ոչ իրանց զլուխների տէրը չեն...

Երիտասարդը լռեց եւ փոքր ինչ շունչ առնելուց յետոյ դարձեալ շարունակեց.

— Տեսնում ես, հայր, դու էլ բարի մարդ էիր, զառան պէս խոնարհ էիր դու, բայց քո բարութիւնը

քեզ չօգնեց: Եւ այդ քահանաները, որ բարձրացած են ձողերի գլխին, եւ այդ դիակները, որ ընկած են նրա շուրջը, — բոլորն էլ բարի մարդիկ էին. ես ճանաչում եմ նրանց: Բայց չարի առջեւ ընկան, բարութիւնը չօգնեց նրանց... Չարի հետ պէտք է չար լինել, բարիի հետ բարի. այս է պահանջում անարդար մարդկութիւնը...

— “Մի տանջիր ինձ, որդի. թող հանգիստ մեռնի անբախտ հայրդ, ասաց ծերունին նուաղած ձայնով: Բո լեզուն աւելի խոր է խոցում իմ վէրքը, քան քուրդի նիզակը...”

— Ո՛չ, դու հանգիստ մեռնել չես կարող: Ես չեմ կարող հանգիստ մեռնել, որ հանգիստ չեմ ապրել: Հանգիստութիւնը մեզ համար չէ, ոչ մեր խրճիթներում, եւ ոչ գերեզմանի խորքում...

— “Դու գնացիր. տեսա՞ր մեր խրճիթը”, հարցրեց հայրը:

— Տեսայ, այրվում էր նա:

— “Դսկ մայրդ... քոյրերդ... եղբայրդ...”

— Ոչ որ չը կար. գիւղումը միայն դիակներ գտայ:

— “Եւ չը շտապեցիր մի օր առաջ ձեռք հասցնել անօգնական հօրը եւ ազատել նրան ընտանիքը...”

— Ես դրա վրայ չէի մտածում, թէ եւ գիտէի, որ այս երկիրը այս օրերում կրակի եւ սրի կերակուր պիտի դառնայ: Եւ ի՞նչ կարող էի անել ես. մի ձեռքը բիւրաւոր ձեռքերի դէմ ոչինչ անել չէ կարող: — Եւ ո՞վ կարող է օգնել մի ժողովուրդի, որ ինքն իր ձեռքովն է սրում թշնամու սուրը: Աւելի քան բռնակալը, մենք ինքներս մեզ համար պատրաստեցինք ստրկութեան շղթաները... նրանց դարբնեցին մեր պապերը եւ կաշկանդեցին զաւակ-



ներին... Եւ թող անիծեալ լինին նրանք, որ խլեցին մեզանից մեր սիրտը եւ նրա տեղը մի կտոր մեռած միս դրեցին... Եւ թող անիծեալ լինին նրանք, որ սովորեցրին մեզ բարի լինել, հնազանդ լինել, համբերող լինել...

Այսպէս անագորոյն որդին կարգում էր իր սարսափելի անէծքները ողորմելի հօր դիմին, այսպէս նղովում էր նա պապերի սուրբ յիշատակը, մի այնպիսի լոպէում, երբ ծերունին մարելու վրայ էր: Այսպէս մի չար գեւի նման, կարծես, աշխատում էր խլել նրանից իր վերջին շունչը, նրանից, որ իրան շունչ եւ կեանք էր տուել:

— Բաւական է, խօսեց ծերունին մեծ դժուարութեամբ: — Դու եկած ես մեր դիմին անէծքներ թափելու:

— Ո՛չ, ես դրա համար չեկայ: Մեր հայրերը այդ պատուին էլ արժան չեն: — Ինձ քաշեց դէպի հայրենիքը մի սիրտ, որը սիրում էր ինձ: Ես եկայ նրան ազատելու: Հօրից, մօրից եւ ազգականներից անարգուած որդուն սիրում էր նա:

Նա սիրում էր աւագակին, որից դժոխքը սարսափում է. նա սիրում էր եղեռնադործին, որին հրեշտակները եւ սատանաները ատում են:

— Ես եկայ նրան փրկելու...

Ծերունու գլուխը կրկին թեքուեցաւ որդու բազուկների վրայ, եւ նա վերջին խօսքերը չը լսեց: «Դուն անիծիր. բայց ես օրհնում եմ քեզ»... ասաց նա եւ աչքերը փակուեցան: Բայց շրթունքները դեռ շարժվում էին. եւ նա մրմնջում էր աղօթքի նման մի բան, որ վերջացրեց այս խօսքերով. «Աստուած, ներիր որդուս»...

Այդ նրա վերջին խօսքն եղաւ:

Երիտասարդը երկար բաց չէր թողնում հօր անչնչացած մարմինը իր գրկից. երկար նրա աչքերից արտասուքը թափվում էր ծերունու ձիւնի պէս սպիտակ, բայց արիւնով ներկուած ալբների վրայ: Այդ երկրորդ արտասուքն էր, որ թափում էր նա սիրելի հայրենեաց հողի վրայ ոտք կոխելէն յետոյ:

Երբ բոլորովին հանգստացած էր ծերունին, նա վեր առաւ մարմինը եւ այնպէս արիւնաթաթախ դրեց մի փոսի մէջ. յետոյ իր դաշոյնի ծայրով փորեց հողը, ծածկեց նրան: Եւ ապա մօտաւոր լեռան ժայռերի բեկորներից բերեց մի քանի կտորներ եւ դրեց գերեզմանի վրայ, ասելով. — Հանգստացիր, ո՞վ բարի մարդ, եւ թող այս գերեզմանը մօտ լինի այդ զոհարանին, ուր մորթուեցան մեր հայրենիքի երեւելիները: Այս սպանդանոցը կը լինի մի յաւիտենական խրատ ապագայ սերնդին, որոնց յիշել կը տայ իրանց թշուառ անցեալը... որոնց մտածել կը տայ հիմնել ներկան աւելի հաստատուն պայմանների վրայ... եւ այն ժամանակ դուցէ պապերի արիւնը որդիների փրկութեան ճանապարհը բաց կ'անէ...

Ե.

Ամփոփելով հօր մարմինը իր անշուք գերեզմանի մէջ, երիտասարդը կրկին շարունակեց իր ճանապարհը: Նա այժմ գնում էր բոլորովին խեղադարի նման, ընկած դառն մտածութիւնների մէջ: Կորցնելով հայր, մայր, եղբայր եւ քրորեր, նա այժմ սարսափելի կասկածի մէջ էր՝ կորցնել եւ նրան, որին սիրում էր: Այս պատճառով շտապում էր նա: Բայց դեռ բաւական ճանապարհ կար, մինչեւ կը հասնէր այն գիւղը, ուր բնակվում էր նա:



Նա գնում էր այնպիսի անանցանելի շաւիղներով, որոնց շրջակայքում ժայռերի, մացառների եւ թփերի մէջ մի ամբողջ բանակ կարող էր թաղչիլ եւ ուղեւորի աչքից անյայտ մնալ: Եւ այս պատճառով մեծ եղաւ նրա զարմանքը, երբ մի քանի անգամ նրա ականջներին զարկեցին անորոշ ձայներ, յետոյ պարզ ըսել եղաւ իր անունը՝ «Սարհատ, Սարհատ»: Ո՞վ կարող էր լինել դա: Նոյն շրջակայքում հազիւ թէ մի մարդ կարող էր ծանաչել նրան, թէեւ նա ունէր ընկերներ, բայց նրանց մի քանի օր առաջ զանազան յանձնարարութիւններով ուղարկել էր դէպի զանազան կողմեր: Մտածեց, դուցէ նրանցից մէկը լինի, եւ մատը բերանին դնելով, խորհրդաւոր ձայնով շփացրեց: Նրան պատասխանեցին բաւական մօտաւոր տեղեց, բայց ձայնը շատ օտարութիւն երեւաց: «Նրանցից եւ ոչ մէկը լինել չէ կարող», մտածեց ինքնիրան, եւ հրացանը ուսից վեր բերելով, կանգնեց, իր շուրջը նայելով: Նոյն միջոցին «Սարհատ» անունը կրկին զարկեց նրա ականջներին, երկու թեւքեր փաթաթուեցան նրա վզովը, եւ մի մարդ սկսեց ջերմ համբոյրներ սփռել նրա երեսի վրայ:

— Նրեւի, իմ տէրը չէ ծանաչում իր ծառային, ասաց նա քրդերէն լեզուով:

— Ծանաչեցի, Մըստօ, պատասխանեց երիտասարդը եւ ուրախութեամբ համբուրեց նրան:

Մըստօն ազգով քուրդ էր եզլիլիների ազանդից. նա երիտասարդի հօր հովիւն էր եւ նրա մանկութեան ընկերը: Մի կլորիկ պատանի էր Մըստօն խիստ աշխոյժ եւ հաւատարիմ, երբ թողեց նրան երիտասարդը, իսկ այժմ գտնում էր նրան հասակն առած եւ բոլորովին պրական դէմք ստացած: Նա զինուորում էր թեթեւ կերպով.

ունէր միայն հրացան, թուր եւ ատրճանակներ: Երիտասարդը շատ ուրախացաւ, որ հանդիպեցաւ իր հօր տան հաւատարիմ ծառային, եւ աւելի այն պատճառով, որ նրանից կարող էր քաղել այն տեղեկութիւնները, որ իրան շատ հարկաւոր էին:

— Ա՛խ, որքան յիմար եմ ես, Սարհատ, ասաց Մըստօն իր սովորական ծիծաղով. — քիչ էր մնում, որ չը ծանաչէի քեզ. հէնց որ տեսայ, մտայ թփի ետեւը, հրացանս ուղղեցի... հէնց տրլսկացնելու վրայ էի, մէկ էլ աչքիս ընկաւ ճակատիդ սպին. ինձ ու ինձ ասեցի. դա աղան է, էլ չարձակեցի... — Ա՛խ, ի՛նչպէս փոխուել ես դու, սատանան չի ծանաչի:

Մըստօն կրկին փաթաթուեցաւ եւ կրկին սկսեց համբուրել իր տէրին:

— Դու ուզում էիր ինձ սպանել, Մըստօ, հարցրեց երիտասարդը:

— Պա՛: Ուզում էի նիզակդ խլել. իմը կոտորուեցաւ: Առանց նիզակի քուրդին ամօթ է ման գալ:

— Ե՛րբ կոտորուեցաւ:

— Կռիւ ունեցայ քրդերի հետ, երբ մեր ոչխարները թալանում էին: Բոլորը տարան անհաւատները, մի հատ էլ չը թողեցին: Քո քուռակն էլ տարան, Սարհատ, այն կտպոյտ քուռակը. մի տեսնէիր, ի՛նչ լաւ ձի էր դարձել. — ամեն օր լաւ ուտացնում, չաղսցնում էի, մի օր աղան կը դայ, կը նստի. տարան անհաւատները... այնքան ոչխարներից մէկն էլ չը թողեցին:

— Մեր ոչխարները:

— Չերբ. բա ումը. Մըստօն խօսքս ար չունի: Ոտքիս էլ գնդակ դիպաւ: Բայց ես էլ մի քանիսին գլուրեցի...



Հիմա՞յ ո՞ւր էիր գնում այսպէս կաղլիկ ոտով:

— Գնում էի այս կողմը... բան կար...

— Ի՞նչ կար:

— Ա՛խ, լեզու չէ բռնում, որ ասեմ... անիծուի՜ն քրդերը... աղայիս...

Մըստօն չը կարողացաւ իր խօսքը վերջացնել, նրա աչքերը լըռեցան արտասուքով եւ սկսեց երեսայի նման հեկեկալ:

— Սպանեցին... իմանում եմ, ասաց երիտասարդը: Գնում էիր ի՞նչ անես:

— Թաղեմ: Խօս այնպէս չէի թողնելու: Իմ աղան լաւ աղայ էր:

— Ես թաղեցի, պատասխանեց երիտասարդը տխուր ձայնով: — Դու էն ասա, Մըստօ, թէ մի բան գիտես մօրս, քոյրերիս եւ եղբօրս մասին:

— Մըստօն ամեն բան գիտէ. գիժ չէ՞, որ չը գիտես նայ: — Գլխիցը պատմեմ:

— Ո՛չ, կարճ կապիր: Ինչ կը հարցնեմ, էն ասա:

— Լաւ, հարցրու:

— Ե՞րբ եկան քրդերը:

— Քրդերը եկան երկու օր առաջ. գիշեր էր, երբ եկան նրանք, մարդիկ բոլորն էլ քնել էին: Նրանք շատ չէին, հարիւր ձիաւոր հազիւ կը լինէին որ եկել էին մեր գիւղը վրայ. միւսները գնացել էին ուրիշ գիւղերի վրայ: Բայց հայի գիւղը թալնելու համար տասը ձիաւոր էլ բաւական է: — Ինչո՞ւ հայերը զօջաղ չեն, աղայ, դա լաւ չէ, դա շատ վատ է: — Լացն ու աղաղակը բարձրացաւ, երբ նրանք խրճիթների դռները կոտրատեցին եւ ներս մտան: «Տօ՛, խանիխարաբներ, ասում էի ես հայերին, խօ կնիկ չէք, մարդ էք, թէ որ թուր ու թուանդ

չունէք, քարով, փայտով, կացինով խփէք ու դուրս արէք էդ շներին»: Բայց ո՞վ էր իմ ձէնը լսողը: Առաջ նրանք սկսեցին դուրս տալ, ինչ որ տանելու էին, թէ ապրանք, թէ կին եւ թէ աղջիկ. բայց մնացած անպիտան ապրանքները՝ ծերերի, պառաւների, երեխաների հետ՝ թողեցին խրճիթներում, դռները կրկին փակեցին, յետոյ կրակ տուեցին, այրեցին: Դսկ սղամարդերին կոտորում էին:

— Ոչ ոք չազատուեցա՞ւ:

— Ազատուեցան նրանք միայն, որ առաջուց բանը գիտէին ու փախել գնացել էին, սարերում թաք էին կացել: Բայց շատերը չէին հաւատում, թէ քրդերը այնպէս կ'անէին. նրա համար որ, դայմագամը գրում էր ժողովրդին՝ իրանց տեղումը հանգիստ մնան, չը վախենան: ԽՍաբում էր անիծուածը:

— Մեր տան հետ ի՞նչ պատահեց:

— Հայրդ տանը չէր, գնացել էր Բաշ-Կալա, ինձ ասաց. — Մըստօ, տունը պահիր, մինչեւ ես կը դառնամ: Ես արթուն էի, երբ քրդերը եկան, հրացանը ձեռիս կտուրի վրայ կանգնած էի: Բայց ի՞նչ կարող էր անել մենակ Մըստօն այնքան զազաններին. մի տասը սղամարդ եթէ հետս ունենայի, նրանց չէի թող տալ, որ գիւղն էլ մտնէին, բայց մենակ էի: Ես ձեռք էլ չը բարձրացրի, նրա համար որ, քուրդի խասեաթը լաւ էի իմանում, հէնց որ մէկին զիպչէի, ոչ մի հողի կենդանի չէի թողնի: Ես աշխատում էի մի կերպով ընտանիքը ազատել. մնացածը, ասում էի, գրուի՜ր քարը, թող տանեն: Առանց ժամանակ կորցնելու, ես տնից դուրս հանեցի մօրդ, եղբօրդ եւ երկու քոյրերիդ. բայց այնքան յիմար էի, որ չը մտածեցի, թէ տանը օրօրոցի մէջ սղայ



մնաց: «Երեխան, երեխան» պողոտա մայրդ. եւ վազեց դէպի տուն: Ես մնացի երկու սրի մէջտեղում, չէի իմանում, դէպի որ կողմը դառնամ: Եթէ աղջիկներին թողնէի, քրդերը կը տանէին. — լաւ է: ասեցի, դրանց տանեմ մի տեղ թաքցնեմ, յետոյ դառնամ դէպի մայրը: Եղբորդ եւ քոյրերիդ թաքցրի դիւղեց հեռու գարու արտի մէջ եւ շուտով վազեցի դէպի մայրդ: Երբ հասայ, տեսայ, տունը վառվում էր բոցերի մէջ. բայց խեղճ կինը ոչ իմ կանչելուն ականջ դրեց եւ ոչ էլ բոցերին մտիկ տուեց, մտաւ կրակի մէջ. այն րոպէում փուլ եկաւ կտուրը, եւ նա էլ դուրս չեկաւ...

Քարացածի նման լուռ էր երիտասարդը այս բոլորը. նա գունաթափուել էր մալմարիոնի պէս, եւ բարակ շթ ունեւորը դողդողում էին տենդային անհամբարութեամբ: Արտասուք նրա աչքերում չէր երեւում:

— Հայրս ինչո՞ւ գնաց Բաշ-Նալա, հայրեց նա դողդոջուն ձայնով:

— Երբ լսեցին, թէ Շէյիւը հրամայել է դաւուրներին կոտորել, ամենի վրայ երկիւղ ընկաւ, չէին իմանում, թէ ինչ անեն, որ կողմը փախչեն, որ ազատուեն: Այն ժամանակ հայրդ հաւաքեց դիւղերի տանուտէրներին երկու քահանայի ու մի վարդապետի հետ գնացին Բաշ-Նալա, որ մուգիւրին, գայմազամին ասեն, որ նրանք ասկար (զինուոր) ուղարկեն երկիրը պահպանելու: Մուգիւրն ու գայմազամը առաջ խոստացել էին, թէ ասկար կ'ուղարկեն յետոյ այսօր էգուց դցելով, այնքան ուշացրել էին, մինչեւ քուրդը եկաւ, իր բանը տեսաւ... Յետոյ գնացողներն տեսնելով, որ գայմազամը խաբում է, յոյսը կտրած յետ էին դարձել: Բայց քուրդերը իմանալով, որ գայմազամի մօտ էին գնացել, ճանապարհին բռնել էին,

եւ այնպէս էին արել, որ դու ինքդ քո բարի աչքով տեսար...

— Հիմայ ռոտեղ են քոյրերս, եղբայրս, հայրեց երիտասարդը, երկչոտ վատահութեամբ, մի դուցէ նրանց էլ մի փորձանք պատահած լինի:

— Նրանք հիմայ լաւ տեղում են. ես տարայ նրանց մեր էլի (ցեղի) մէջ. մեր չադրումն են կենում կնոջս մօտ: — Դու չես իմանում, Սարհատ, ես ախար հիմայ կին ունեմ, մի երեխայ էլ ունեմ, մի սիրուն երեխայ: Հայրդ (Աստուած նրա հոգին լոյսի բաժին անէ) ինձ պսակեց, մի լաւ աղջիկ բերեց, եւ հարկը ոչխար էլ տուեց, ասում էր. «Մըստօ, բաւական է ինչ որ ծառայեցիր, դնա՛ դրանից յետոյ քեզ համար ապրիր, տուն ու տեղի տէր դարձիր»: Բայց ես ձեր տան հացը կերել էի. նրանով էի մեծացել, ասում էի, — չէ, աղայ, քո տան մէջ պէտք է մեռնեմ, եւ քանի Սարհատը չի եկել, ես քո մեծ որդին կը լինեմ:

Երիտասարդի սիրտը չը դիմացաւ այս խօսքերին, նա զրկեց Մըստօին, եւ ճակատիցը համբուրեց, ասելով.

— Դարձեալ դու իմ եղբայրը կը լինես, բարի Մըստօ, ես քեզանից չեմ բաժանուի: — Բայց դու այն ասա, կարծում եմ, որ եղբայրս եւ քոյրերս ձեր չադրում ապահով կը մնան:

Պատանի քուրդը ինքնավստահ պարծենկոտութեամբ պատասխանեց.

— Շէյիւ Զալէդդինը իր բոլոր աւագաններով Մըստօի չադրը մանել չէ կարող: Դու ինքդ լաւ ես իմանում եղբիւրների էյրաթը (նախանձախնդրութիւնը). մի մարդ, ինչ ազգից էլ որ լինէր նա, երբ մոռնում է եղբիւրի չադրի տակը, այն ցեղի բարի հիւրն



է համարվում. այն ժամանակ բոլոր ցեղը իր արիւնքը կը թափի եւ իր հիւրին թշնամու ձեռքը չի տայ:

Յանկարծ նա խօսքը կտրեց եւ սկսեց ուշադրութեամբ ականջ դնել:

— Լսում եմ, հարցրեց նա, այդ ձայները:

— Ի՞նչ ձայներ, հարցրեց երիտասարդը, որովհետեւ նա այն աստիճան խռովուած էր, որ ոչինչ ձայն չէր լսում:

— Նրգում եմ... Այսպէս երգում է քուրդը, երբ թալան եւ գերիներ է տանում:

— Ուրեմն գնանք, ասաց երիտասարդը:

— Գնանք, կրկնեց պատանին:

Նրկուքն էլ գիմեցին դէպի այն կողմը, որտեղից լսելի էին լինում ձայները:

## 9.

Կէս ժամից յետոյ նրանք գտնվում էին մի լեռան բարձրաւանդակի վրայ, որտեղից նկատեցին ձորի մէջ մի ընթացող քարաւան, որը հեռաւորութեան պատճառով թէեւ պարզ չէր նշմարվում, բայց նրա օտարոտի երեւոյթը խիստ կասկածաւոր ձեւ էր տալիս նրան:

— Մենք քարաւանի առաջը կը կտրենք, թէ որ այս կողմով գնանք, ասաց Մըստօն, ցոյց տալով հազիւ նկատելի շաւիղը, որ միայն որսորդներին էր մատչելի:

— Բայց ես չեմ ուզում, որ նրանք տեսնեն մեզ, ասաց Սարհատը խորհրդաւոր ձայնով:

— Տեսնել չեն կարող, հազար աչք էլ ունենան տեսնել չեն կարող. այս լեռները ես ճանաչում եմ, որպէս իմ հինգ մտոր: Գնանք:

Մըստօնի ընտրած ճանապարհը, թէեւ շատ դժուարին էր եւ անդադար սարսափելի ելեւէջներով էր գնում,

բայց այնքան կարճ եւ կտրուկ էր, որ շուտով նրանք անցան քարաւանը, եւ անտեսանելի կերպով թաքչելով թփերի մէջ, սկսեցին հեռուից դիտել նրան: Սարհատը մի հարեւանցի հայեացք ձգելով քարաւանի վրայ, տեսաւ, որ դա քուրդ ասպատակների մի մեծ խումբ էր, որ տանում էին աւար եւ գերիներ: Նա դարձաւ դէպի իր ընկերը այս խօսքերով.

— Կարող ես, Մըստօ, մի կերպով սանել այս քարաւանի մէջ եւ իմանալ, թէ գերիները որ տեղից են բերում, ո՞ւր են տանում եւ այս գիշեր որտեղ կ'իջեւանեն կամ իրանք քրդերը ի՞նչ ցեղից են:

— Բոլորը կարող եմ գիտենալ:

— Ի՞նչպէս կը մտնես նրանց մէջ:

— Ինչպէս պէտք է մտնել, ինձ լսօ չեն ուտի. կը գնամ, բարեւ կը տամ, քէֆները կը հարցնեմ, յետոյ ես գիտեմ, թէ ի՞նչ կ'ասեմ...

— Լաւ, գնա, չուշանաս:

Մըստօն սատանայի նման աներեւութացաւ: Իսկ Սարհատը այժմ սկսեց աւելի հետաքրքրութեամբ նայել քարաւանին: Ի՞նչ էր տեսածը: Չիաւոր քրդերի մի բազմութիւն, եզների, աւանակների եւ սայլերի վրայ բարձած, քշում էին խառնիճաղանձ քարաւանը, որ տանում էր տնային կարասիք եւ զանազան տեսակ իրեղէններ: Բեռների վրայ կապել էին մի-մի կամ երկու երկու կին, աղջիկ եւ մանկահասակ պատանիներ: Աւարը եւ գերիները միասին մի բեռն էին կազմում եւ քշում էին առաջ ամենայն սաստիկութեամբ: Նրանք տարվում էին այն անասունների վրայ, որ պատկանում էին թշուառ գերիների ծնողներին: Տէրը իր անասունի վրայ նստած, գերի էր գնում: Քարաւանի ընթացքը շտապեցնելու



Համար քրդերը ցցած ունէին իրանց նիզակների ծայրերին մարդկային կառափներ. ծնողների կարած գլուխը ցոյց էին տալիս որդիներին, որպէս մի խրատիլ, որ վախենան, որ փորձ չը փորձեն փախչելու, շուտ-շուտ գնան, ուր որ տանում են նրանց եւ ձայն չը հանեն...

Սարհատը երկար նայել չը կարողացաւ, նրա գլուխը պարտուեցաւ, եւ քարաւանը անցաւ:

Նրան այնպէս էր թուում, որ աշխարհս փոխուել է, Նեռը յայտնուել է, եւ մարդը, Աստուծու պատկերը, կատաղի դազան դարձած, իր նման մարդերի արիւնը ծծում է, նրանց միսը ուտում է: Նա շատ էր ցանկանում ինքն էլ նոյն դազաններից մէկը լինել, եւ դրա համար այրական սիրտ եւ բաւական քաջութիւն ունէր. բայց ափսոսում էր, որ մենակ է, շատ ընկերներ չունի:

Յուսահատութիւնը շատ անգամ ակամայ կերպով ձգում է մարդուն ծայրայեղ մտածութիւնների մէջ: Սարհատը բնութեամբ բարի էր, բայց հանգամանքները նրան չար էին շինել: Նա տեսնում էր մի ամբողջ ժողովուրդ, եւ այն ժողովուրդը, որին ինքն էլ էր պատկանում, հաւի նման մորթում են, տունը աւերակ են դարձնում, կայքը յափշտակում են, որդիքը գերի են տանում, — եւ այդ ժողովուրդը ոչինչ միջոցներ չունի պաշտպանուելու: Նա գիտէր, որ այս սոսկալի պատահարները դարերով կրկնվում են նոյն ժողովուրդի հետ եւ տակաւին նա չէ մտածել ընդդիմադրութեան մի ջօրութիւն կապելու: «Եթէ կարիքը, ասում էր նա, մարդու վարպետ է անում, եղանակների խառութիւններից պաշտպանուելու համար նա հազուստ է հնարում, գազաններից պաշտպանուելու համար զէնքեր է հնարում,

ինչու. չէ մտածում նա մի եւ նոյն խելքը բանացնել մարդակերպ գազանների ձեռքում զոհ չը դառնալու համար: Այսպէս մտածելով, Սարհատը այն եղբակացու-թեան էր հասնում, թէ այն ժողովուրդը ինքն էր մեղաւոր, որ կեանքի պահանջները չէր հասկացել, եւ չէր մտածում թէ ինքը երկրի վրայ է բնակվում, մարդիկների հետ գործ ունի եւ ոչ թէ հրեշտակների հետ...

Սարհատը երկար էր թափառել երկրի վրայ, շատ ազգեր եւ շատ աշխարհներ էր տեսել, բայց իր կեանքում ոչ մի լաւ մարդու չէր հանդիպել, եւ այդ պատճառով, նա մարդկանց վրայ կաղմել էր խիստ վատ դադափար: Բոլոր մարդերին նա աւազակն էր էր համարում, այն զանազանութեամբ միայն, որ մէկը կոպիտ սրով է յափշտակում, միւսը խելքով, երրորդը արհեստով, չորրորդը մարդասիրութեան եւ քաղաքակրթութեան անունով եւ այլն:

Այս տեսակ մտքեր բացատրելու համար Սարհատը իր առանձին լիզուն եւ արտասանութեան ձեւերն ունէր. «աւազակութիւնը, ասում էր նա, մարդկանց մէջ զանազան գոյներով եւ շատ անգամ գեղեցիկ ծրարներով է յայտնվում. դու պատառիր արտաքին կեղեւը, եւ կը տեսնես միջուկը աւազակութիւն է, եւ աւելի ոչինչ»:

Սարհատը ինքն էլ աւազակ էր, մի արիւնհասեղ եւ սոսկալի աւազակ. նա եթէ ծնուած լինէր մի ուրիշ երկրի վրայ եւ մեծանար մի ուրիշ շրջանում, գուցէ ուրիշ տեսակ մարդ, կամ այլ տեսակ աւազակ կը դառնար, որովհետեւ ամեն մի աւազակի գործունէութիւնը համապատասխանում է նոյն հասարակութեան, որի միջեց նա յայտնվում է: Աւազակը մի սարսափելի բողոք է հասարակութեան անկարգ կազմակերպութեան դէմ:



Հայաստանի լեռների վրայ, ուր երկու հակառակ ծայրերի վրայ կանգնած են երկու հակառակ ազգութիւններ, — մէկը՝ վերջին ստրկութեան հասած հայը, միւսը՝ վերջին բարբարոսութեան հասած մահմետականը, — եւ եթէ ստրուկների կողմից բողոք է բարձրանում դէպի բռնակալութիւնը, դա բնականաբար պիտի ընդունէր ոչ այլ կերպարանք, բայց միայն Սարհատի աւազակային կերպարանքը...

Բայց զարմանալին այն էր, թէ ինչո՞ւ այնքան փոքր էր Սարհատների թիւը. նրա ամբողջ հրոսակը կազմուած էր տասներկու քաջերից, որոնց նա կոչում էր «աւազակների առաքելութիւն»։ Այս հարցը բացատրելու համար պէտք է երկար ու բարակ քննութիւնների մէջ մտնենք։ Վենք թողնում ենք այդ, ասէ՛ք Մըստօն կրկին յայտնուեցաւ, տեսնենք, նա ինչ է ասում։

— Ամեն բան խմացայ, ասաց նա։

— Մէկ-մէկ ասա՛, ինչ որ կը հարցնեմ խօսեց Սարհատը։ — Զիաւորները քանի՞ հոգի էին։

— Համբարեցի, յիսունից աւել չեն։

— Ո՞ր ցեղից են։

— Հարսոջի են<sup>1</sup>։

— Գերիները եւ թալանը ո՞ր կողմից են բերում։

— Շատախու կողմերից<sup>2</sup>։

— Ո՞ւր պիտի տանեն։

— Դէպի Սօմայի<sup>3</sup>։

— Այս գիշեր ո՞րտեղ միտք ունեն իջեւանելու։

<sup>1</sup> Քրդերի կիսավայրենի ցեղ է, որ բոլորովին հաստատաբան կեանք չէ վարում։

<sup>2</sup> Մի գաւառ է Վասպուրականում։

<sup>3</sup> Մի գաւառ է Պարսկաստանի Ուրմի նահանգի մօտ։

— Հասարիստանի հովիտների մէջ, Խանսու-Սօրի մօտ։ Սարհատը թողեց իր հարց ու փորձը եւ սկսեց մատնելով լուռ մի բան հաշուել. յետոյ նա կրկին դարձաւ դէպի պատանին։

— Ի՞նչ ես կարծում, Մըստօ, դրանք երբ կը հասնեն Սախկալ-Թութան կիրճին։

Մըստօն ըստական մտածութիւնից յետոյ պատասխանեց։

— Սախկալ-Թութան՝ կիրճին կը հասնեն, երբ արեւը մտնելու մօտ կը լինի։

— Ես էլ այսպէս եմ կարծում, ասաց Սաֆհատը։

— Հիմա լսիր, Մըստօ, աւելացրեց նա։ — Ի՞նչքան ժամանակում կը հասնես մինչեւ Բիթինկերտ գիւղը։ — Ծանաչում ես։

— Ուղիղ կէսօրին այնտեղ կը լինեմ։

— Շատ լաւ, շարունակեց Սարհատը. — դու տեսել ե՞ս Բիթինկերտից փոքր ինչ հեռու ձորի մէջ մի մատուռ։

— Տեսել եմ, երկուսն է, մէկը քանդուած է։ Ո՞րն ես ասում։

— Հէնց այն քանդուածն եմ ասում։

— Ծանաչում եմ։ Մի գիշեր այնտեղ թաք եմ կացել, երբ մի ձի էի գողացել։ Լաւ թաքնուելու տեղ է։ Սարհատը յետոյ ուրիշ հարց առաջարկեց։

— Ի՞նչ տեսակ կենդանիների ձայնին նմանեցնել կարող ես։

— Շատերի. — շան նման հաջել դիտեմ, աքլարի նման խօսել գիտեմ, էջի նման կը զռամ, գայլի նման

<sup>1</sup> Սախկալ-Թութան նշանակում է մօրուքից բռնող. այսպէս կոչվում են ահասարակ այն նեղ եւ դժուար անցանելի կիրճերը, որոնց մէջ աւազակներն աւելի հեշտութեամբ են որսում ճանապարհորդներին։



կողնամ, դառան նման կը մնամ, կատուի նման միայն կ'անեմ, յոպուպի նման բի-բոն կ'անեմ. — էլ ի՞նչ ես ուզում: Ուրիշ շատերն էլ գիտեմ:

— Այդ վերջինը բաւական է: Հիմայ ըիր: Ուղիղ կը գնաս դէպի այն քանդուած մատուռը, որտեղ գողացած ձին թաքցրիր: Դեռ չը հասած մատուռին մի բլուր կայ...

— Որի զլխին տնկած է մի ծակ քար, աւելացրեց Մըստօն:

— Այո: Այն ծակ քարի մօտ կը կանգնես, երեք անգամ յոպուպի ձայն կը հանես. քեզ կը պատասխանեն նոյն ձայնով: Յետոյ ձայնդ կը փոխես. երկու անգամ բուի ձայնով կը կանչես: Այն ժամանակ քեզ մօտ կը յայտնուի մի մարդ: Դու նրան կ'ասես, դեռ արեւը մայր չը մտած պատրաստ լինեն Սախկալ-Թութան կիրճի մօտակայքում:

— Կարելի է, նա հարցնէ, թէ քեզ ո՞վ ուղարկեց:

— Իմ անունը կը յայտնես:

— Կարելի է, նա չը հաւատայ:

— Այս մատանին ցոյց կը տաս:

Սարհատը հանեց իր մատից մատանին եւ տուեց Մըստօն:

— Կարելի է, նա հարցրեց, թէ ի՞նչ գործի համար է:

— Դու կը պատմես այդ գերիները տանող քարաւանի մասին բոլորը, ինչ որ տեսար, եւ կ'ասես, թէ քարաւանը Սախկալ-Թութան կիրճի մէջ մտածին պէս, պէտք է նրա առաջը կտրենք, որ գերիները ու թալանը իշխեք քուրդերից:

— Իմացայ: Նրանք քանի՞ հոգի են:

— Տասն եւ երկու:

— Ո՞վքեր են:

— Իմ ընկերները:

— Տասն եւ երկու հոգին բաւական է յիսունի գէմ Սախկալ-Թութան կիրճում, նկատեց Մըստօն. — ես էլ նրանց հետ տասն եւ երեք կը լինենք: Բայց 13 թիւը նա ու է:

— Ինչ էլ հաշուելու լինես, 14 հոգի կը լինենք, ասաց Սարհատը, 14-ը նա ու՛ չէ:

— Մեզանից չորս հոգի բաւական է, որ կիրճի դուռը կտրէ, էլ ինքը սատանան չէ կարող այնտեղեց դուրս գալ, նկատեց Մըստօն. — Ի՞նչ լաւ տեղ ընտրեցիր, աղայ, բայց դու ո՞ւր կը մնաս:

— Ես ծածուկ կը հետեւեմ քարաւանին, մինչեւ կիրճին հասնելը: Բայց դու այն ասա՛, ոտքդ քեզ խօ չի՞ նեղացնի. մինչեւ Բիժինկերտ բաւական հեռու է:

— Ո՛չ, չի նեղացնի, անիծուած գնդակը մնի միջովն է անցել, ոսկորին չէ դիպել. մահլամ եմ դրել ու պինդ կապել:

— Վէրքը քանի՞ օրուայ է:

— Երեք օրուայ, այսպիսի վէրքեր շատ է տեսել Մըստօն. վնաս չունի:

— Դէ՛հ, հիմայ գնա՛:

Սարհատը եւ Մըստօն բաժանուեցան, մէկը սկսեց գնալ դէպի քանդուած մատուռը, միւսը սկսեց զարուղի ճանապարհներով հետեւել գերիւարներին:

<sup>1</sup> Նա նշանակում է անբարի կամ չարագուշակ: 13 թիւը նա է համարվում մահմետականների մէջ. համբարելու միջոցին 13 թուին հասնելու ժամանակ մահմետականը միշտ անց է կացնում, ասելով. «13 չէ»:



Է.

Սարհատի հետ բաւական ծանօթ է ընթերցողը, հարկաւոր է փոքր ինչ ծանօթանալ եւ նրա ընկերների հետ, որոնցից կազմուած էր նրա հրոսակը: Զր նայելով, որ Սարհատը էր պետը եւ զլխաւորը իր խումբի, բայց բոլորին «եղբայր» էր կոչում. եւ իրաւ, այս կոչմանը արժանի էին նրանք, միացած լինելով եղբայրական խիստ սերտ կապերով: Նրա խումբը հաւաքուած էր զանազան տեղերից զանազան ժամանակներում, որոնց թիւը տասն եւ երկուսից խիստ հազիւ էր անցնում: Նրանց մէջ կային սասունցիք, զէյթունցիք, շատախցիք, դիւրբէքիւրցիք. նրանց մէջ կային մի քահանայ Սարբերդի քրդախօս հայերից եւ մի վարժապետ: Այս վերջինը Կ. Պոլսում բարեգործական նպատակով կազմուած մի ընկերութեան անդամ էր, որ ուղարկուել էր Վանայ կողմերի գիւղօրայքում կրթութիւն տարածելու, բայց ռուս-թիւրքական պատերազմի խռովութիւնների ժամանակ նա միացաւ Սարհատի խումբի հետ, երբ քրդերը նրան իր գիւղական դպրոցի մէջ աշակերտների առջեւ սաստիկ ծեծեցին, եւ նրա սանիկներից մի քանիսը առեւանգեցին, եւ մի քանի օրից յետոյ կրկին բաց թողեցին:

Սարհատի խումբը կազմուած էր քուրդի կերպարանքով եւ գործում էր քուրդի անունով: «Հայ» անունից խորշում էր նա, ոչ թէ այն պատճառով որ այդ անունը ատելի էր նրան, այլ ընդհակառակն, սիրում էր նա հայութիւնը, — բայց այդ անունը անհամապատասխան էր գտնում թէ իր պաշտօնին եւ թէ նպատակներին: Իր թափառական կեանքում, թէ նա ինքը, եւ թէ իր խումբը անդադար զարկվում էին քրդերի հետ, եւ անդադար որ եւ իցէ թշնամական հաշիւ էին վերջացնում

այս եւ այն մահմետական ցեղի հետ, բայց եթէ ցոյց տային, թէ իրանք հայեր են, այն ժամանակ իրանց հակառակորդները կարող էին վճռականորէն լինել այն ողորմելի եւ անպաշտպան հայերից, որոնք գուցէ Սարհատի գոյութեան մասին ամենեւին տեղեկութիւն եւս չունէին:

Սարհատը իր խումբի հետ Դիարբէքիւրի կողմերումն էր, երբ լսեց քուրդերի կատաղի շարժումը, երբ իմացաւ Զալայէդդինի սարսափելի դիտաւորութիւնը եւ երբ յայտնի եղաւ նրան Շէյխ Իբահուլլահի դժոխային խորհուրդը: Նա իսկոյն իւրայիններով շտապեց դէպի Աղբակայ կողմերը: Երկու ցանկութիւն նրան քաշեց դէպի իր հայրենիքը, որին վաղուց մոռացել էր. առաջինը, Աղբակը քուրդերի արշաւանքի գծի վրայ գտնվելով, աւելի պէտք է եւթարկուէր նրանց ասպատակութիւններին, մտածում էր իր հայրենակիցներին օգնութեան ձեռք հասցնել. երկրորդ, որ աւելի գլխաւորն էր, այստեղ կար «մէկը», որին նուիրուած էր իր բոլոր սրտով:

Սարհատի այն խօսքերը, որ նա արտայայտում էր իր հայրենիքի աւերակների վրայ շրջելու ժամանակ, այն խօսքերը, որ նա այնքան անգութ կերպով դուրս թափեց իր հօր առջեւ նրա հոգեվարքի բոլորներում, — այս բոլորը յուսահատ սրտից դուրս բղխած հառաչանքներ էին, այս բոլորը դամբանական ողբեր էին, որ նա կարդում էր իր հայրենիքի գերեզմանական անշարժութեան վրայ: Նա զայրանում էր, նրա վճռովմունքը կատաղութեան եւ խելագարութեան էր հասցնում նրան, երբ տեսնում էր, որ իր հայրենիքը այն չէր, ինչ որ ինքը ցանկանում էր որ լինէր: Նա շատ լաւ էր հասկանում իր վիճակի բոլոր վատթարութիւնը, նա ինքը սարսափում էր իր արիւննոտ ձեռքերից, թէեւ այն ձեռքերը միշտ թշուառների պաշտ-



պան են եղել, եւ երբեք չեն թափել մի անմեղ արիւն,  
— բայց նրա անձնասիրութիւնը վերաւորվում էր, տես-  
նելով, որ ինքը իր բոլոր արժանաւորութիւններով ստի-  
պուած էր լինել մի աւազակային հրոսակի գլխաւոր,  
մինչդեռ կարող էր ամբողջ գունդերի հրամայել եւ իր  
հայրենիքը մաքրել աւազակներից...

Դեռ Աղբակ չը հասած, նա իր ընկերներին առաջարկեց  
այնտեղ, պատուիրելով հարկաւորած օգնութիւնը մա-  
տուցանել տեղային բնակիչներին, իսկ ինքը մենակ  
ուղեւորուեցաւ դէպի Վան քաղաքը: Այնտեղ նա ներ-  
կայացաւ փաշային, եւ յայտնելով այն վտանգը, որ  
սպառնում է Աղբակայ հայերին, խնդրեց, որ իրան թոյլ  
տան՝ տեղային բնակիչներից կազմել մի գունդ՝ երկիրը  
քրդերի եւ բաշխօղուկների ասպատակութիւններից պաշտ-  
պանելու համար: Բայց նրա խնդիրը չընդունուեցաւ, նրան  
պատասխանեցին, թէ «կառավարութիւնը ինքն ամեն  
խնամքներ գործ է դրել երկրի հանգստութիւնը պահպա-  
նելու համար»:

Նա ինքը շատ լաւ էր հասկանում այս խօսքերի  
նշանակութիւնը եւ վերադարձաւ Վանից առանց բա-  
ւականութիւն ստանալու: Եւ այս էր պատճառը, որ մենք  
առաջին անգամ հանդիպեցինք նրան Մոշաբայ ձորում,  
միայնակ Վանից դառնալիս, տխուր եւ յուսահատ:

Բայց նրա եռանդը դեռ բոլորովին չէր թուլացել:  
Երբ մտաւ Աղբակ, կրկին փորձ փորձեց իրագործել իր  
նպատակը: Նա դիմեց մի քանի քահանաների, վարդապետ-  
ների եւ տանուտէրների, աշխատում էր նրանց համոզել,  
թէ պէտք է զինուորել ժողովուրդը գալոց վտանգի  
առաջը առնելու համար: Զալայէդդին դեռ այն ժամանակ  
չէր սկսել իր արշաւանքը, բայց ամեն տեղ սկսուել

էին նկատել լինել քրդերի բարբարոսութիւններն: Նա  
օրինակ էր բերում իրանց դրացի Զօլամէրիկի ասորիներին,  
որոնք զինուորուած էին եւ ոչ մի քուրդ նրանց երկիրը  
ոտք կոխել չէր կարողանում, եւ ոչ ինքը կառավարու-  
թիւնը կարողացաւ նրանց զինաթափ անել. որովհետեւ  
պատասխանում էին, թէ մենք պէտք է որ մեր գլուխը  
պահենք, երբ որ կառավարութիւնը մեզ պահպանելու  
չորհչէ չունի: Նա այսպիսի շատ օրինակներ էր բերում,  
քաջալերական խրախոյսներ էր տալիս, յորդորում էր եւ  
ուրիշ շատ բաներ էր ասում... Բայց քահանաները,  
վարդապետները եւ ժողովուրդի իշխանները նրան յիմարի  
եւ խելագարի տեղ էին դնում... Այս աւելի վշտացրեց  
նրան, քան թէ փաշայի խաբէութիւնը, եւ այն ժամանակ  
նա աւելի համոզուեցաւ, թէ այդ ժողովուրդն ինքն է  
դատապարտել իրան մի ցած ստրկութեան. թէ նա ինքն  
է պատրաստել իր համար մի այնպիսի թշուառ ներ-  
կայ...

Այն օրից, որ բաժանուել էր նա իր ընկերներից,  
նրանց մասին տեղեկութիւն չունէր, եւ չը գիտէր, թէ  
որտեղ մնացին կամ ի՞նչ շէնեցին: Միայն այն օրը մի  
պայմանաւ օր էր, որ նրանք ամեն կողմից պէտք է  
հաւաքվէին «քանդուած մատուռի» մօտակայքում, եւ  
ինքն այնտեղ գնալով, պէտք է տեսնուէր իր ընկերների  
հետ: Բայց գերեվար քարաւանի անակնկալ հանդիպումը  
նրան ստիպեց ուղարկել իր հաւատարիմ Մըստօին նրանց  
կանչելու Սախկալ-Թութան կիրճի մօտ, որտեղ գուցէ  
կարողանային ազատել թշուառ գերիներին:

Մըստօի ձեռնարկութիւնը անպտուղ չը մնաց.  
նշանակած ժամում Սարհատի ամբողջ խումբը պատրաստ  
էր Սախկալ-Թութանի մօտ: Ինքը նոյնպէս հասաւ



այնտեղ: Տեսնելով իր ընկերներին, նա համբուրուեցաւ բոլորի հետ, ասելով.

— Ուրախ եմ, որ ամենիդ մարմնով առողջ եմ գտնում, թէեւ համոզուած եմ, որ սրտով ձեզանից ամեն մէկը վերաւորուած է, վշտացած է, տեսնելով այնքան աւերածներ եւ կոտորածներ, որ գործել է բարբարոս ձեռքը: Բայց այսօր մի գեղեցիկ դէպք առիթ կը տայ ձեզ գործ դնել ձեր քաջութիւնը, եւ դրա համար էլ կանչեցի ձեզ: Մենք 14 հոգով գործ պէտք է ունենանք աւելի քան յիսուն հոգի վայրենի Հարսոշիների հետ:

— Մըստօն բոլորը պատմել է մեզ, պատասխանեց քահանան, որին այժմ կոչում էին Դալե-Բարայ<sup>1</sup>: — Այս խաչով (նա ցոյց տուեց իր սուրը) Հարսոշիների գլխին մի լաւ «պահպանիչ» կը կարգամ:

— Դէպքը, իրաւ, գեղեցիկ է, այս կիրճի մէջ մի զուարճալի խաղ կ'ունենանք Հարսոշիների հետ, ասաց ոգեւորուած վարժապետը, որին այժմ կոչում էին Բիթար-Դալիսի<sup>2</sup>:

— Հարսոշիների հետ լաւ է գործ ունենալ նեղ ծակերում. այդ անիծուածները իրանց բերաններից էլ են կրակ փչում, ասաց սասունցի Յարօն, որին կոչում էին Սասուն Այրսը, այսինքն՝ Սասունի արջ:

— Այդ դատարկախօսութիւններով ժամանակ եւք կորցնում, Հարսոշիները հեշտ ուտելու պատառ չեն... նկատեց զէյթունցի Ներսօն, որին կոչում էին Զէյթուն-Քայասը, այսինքն՝ Զէյթունի ժայռ:

<sup>1</sup> Դալե-Բարայ նշանակում է գիծ հայր, այդ անունը խիստ յատկանիշ էր նրա տարապայման բնաւորութեանը, որ փոխել էր քրիստոնէական ներդրամութիւնը հին կտակարանի վրէժխնդրութեան հետ:

<sup>2</sup> Բիթար-Դալիսի նշանակում է զբօսի խելագարուած:

— Իրաւ, ժամանակը թանկ է մեզ, խօսեց Սարհատը. — մտածենք գործի վրայ: Հարսոշիները ձեզ յայտնի են իրանց քաջութեամբ, նրանց հետ երեսայի խաղ ունենալ անմոռութիւն է: Մեզ կը նպաստէ միայն տեղը եւ դիրքը, եւ այս պատճառով ես ընտրեցի այս կիրճը: Ձեզանից ամեն մէկը թաքնուած կը լինի քարաժայռերի ետեւում, եւ այնքան կը սպասէ, մինչեւ ամբողջ քարաւանը կը լցուի կիրճի մէջ. այն ժամանակ դուք պէտք է բաժանուէք երկու մասն, եօթ հոգի պէտք է փակէ կիրճի մուտքը, իսկ եօթ հոգի՝ նրա ելքը: Մենք 14 հոգի ենք: Ես կը տամ յարձակողական նշանը բազէի ձայնով: Աշխատեցէք, որքան կարելի է, հեռու մնալ արիւնհեղութիւնից: Խօսեցէք միշտ Ռաւանդների բարբառով, որովհետեւ Ռաւանդները Հարսոշիների հետ մի թշնամի ցեղ են. թող նրանք կարծեն, թէ գործ ունեն Ռաւանդների հետ: Եթէ անձնատուր եղան, պայմանների մասին կը խօսեմ ես: Եարձակումները միշտ մի տեղից, կամ մի կողմից չը պէտք է լինեն, շուտ-շուտ փոխեցէք ձեր դիրքը, որ թշնամին կարծէ, թէ բազմութիւն էք: Փախչելու աշխատողներին խիղճն ծածկեցէք, որ ուրիշ տեղ խաբար չը տանեն:

Սախկալ-Թութանը այն սարսափելի կիրճերից մէկն էր, որի նմանը շատ անգամ հանդիպում է Հայաստանի լեռներում. նրա աջ եւ ձախ կողմերից սեպացած ժայռերը պարսպաձեւ բարձրանում էին, մէջտեղում թողնելով մի նեղ անցք, որի միջով քարաւանը անցնելու համար հարկաւոր էր, որ բոլոր զրաւանները մինը միւսի ետեւից շարուած լինէին, որովհետեւ մօտէմօտ գնալու համար բաւական նեղ էր ճանապարհը:

Նրանք գտան քարաւանը այս գրութեան մէջ շարուած կիրճի մուտքից սկսեալ մինչեւ նրա ելքը: Երբ-



նաժ քարաւանը խիստ դանդաղ էր ընթանում: Սարհատը գործը այնքան յետ ձգեց, մինչեւ արեւը մտաւ եւ բոլորովին մթնեց: Բայց լուսնեակ զիշեր էր: Այնուհետեւ նա, վեց հոգի իր հետ առնելով, կտրեց կիրճի ելքը. խակ վեց հոգի Դալե-Բաբային յանձնելով, սլափուրեց կտրել կիրճի մուտքը: Քարաւանը մնաց մէջ տեղում նեղ փապարում լցուած: Քարաւանը նոյն դրութեան մէջ էր դանվում, որպէս թէ ածած լինէր մի հսկայական խողովակի մէջ, որի երկու ծայրերը փակուած էին:

Բազէի սուր եւ ձգական ձայնը հնչեց, որպէս թէ մօտենում է իր որսին: Զանազան տեղերից լսելի եղան հրացանների որոտմունքներ: Կիրճի մէջ սկսուեց մի աղմկալի իրարանցում եւ բարձրացաւ խուլ զղըզիւն: Հարստօշինները կատաղած դաղանների նման սկսեցին այս կողմ եւ այն կողմ վազվղել. բայց ամեն տեղ հանդիպում էին որոտացող կրակների: Առիւծը ընկած էր երկաթի վանդակի մէջ:

Զուրդը վտանգի ընկնելով ցոյց է տալիս իր բնաւորութեան բոլոր վսեմութիւնը: Նա վիշապ է դառնում եւ կամենում է լեռները, ժայռերը կրանել: Կիրճի ահագին պարսպաձեւ շղթաները եւս ոչինչ էին թուում կատաղած հարստօշի աչքին. նա վազրի նման մագլցում էր սեպացած ժայռերը, որ վեր բարձրանայ եւ դէմ առ դէմ հանդիպի թշնամուն: Բայց բնութիւնը յաղթող էր հանդիսանում. վազրը սարսափելի բարձրութիւնից կրկին դահավեժվում էր, կրկին զլորվում էր ցած:

Կիրճի մէջ քրդերի կատաղի աղաղակը, զերինների լացն ու կոծը, աջ եւ ձախ որոտացող կրակների բումբիւնը, միախառնուելով, կազմում էին խիստ սոսկալի

ներդաշնակութիւն: Կռիւր երկու կողմից եւս շարունակվում էր գազանային յամառութեամբ: Քրդերը վճռել էին մինչեւ վերջին շունչը ընդդիմանալ: Այն ժամանակ բազէի խորհրդական ձայնը նորից երեք անգամ հնչուեցաւ. դա նշան էր, թէ պէտք է զթալ: Գնդակները կարկուտի արագութեամբ սկսան թափուել կիրճի մէջ:

Պարզ-լուսնային գիշերը բաւական նպաստում էր կռուին, եւ մեր քաջերը չէին վրիպում իրանց նետումներից, եւ կարողանում էին նշան դնել քրդերին միայն, եւ զերիններին չը վնասել:

Մի ամբողջ ժամ եւս յուսահատական յանդգնութեամբ կռուելուց յետոյ, քրդերի միջից լսելի եղաւ մի ձայն՝ «անձնատուր ենք լինում»: Այն ժամանակ Սարհատը բարձրացաւ մի քարի վրայ եւ սկսեց վերեւից խօսել:

— Աւելի լաւ կը լինէր, որ շուտ անձնատուր լինէիք, այն ժամանակ գոնէ ձեր մեծ մասը կենդանի մնացած կը լինէր. դուք ձեր յամառութեամբ շատերին կոտորել տուիք: Վնասը մեծ չէ, քաջերի ճակատագիրն է այդ. գովում եմ ձեր յանդգնութիւնը: Հիմայ լսեցէք պայմանները. — դուք ամենքդ կը մնաք կիրճի մէջ. բայց աւարը եւ գերինները բաց կը թողնէք իրանց գրաստներով: Մենք ձեզանից չենք խլի ձեր զէնքերը եւ ձիերը. դրանք պէտք են ձեզ. միայն կողոպուտից ոչինչ չը պէտք է պահէք ձեզ մօտ: Դուք կը մնաք կիրճի մէջ եւ չէք շարժուի մինչեւ առաւօտեան լուսաբացը. այն ժամանակ ազատ էք, որ կողմ կամենաք, գնացէք: — Համաձայն էք:

— «Համաձայն ենք», լսելի եղաւ կիրճի միջից:

— Ուրեմն բաց թողէք զերիններին եւ աւարը:



Մի քանի ժամուայ մէջ կիրճը դատարկուեցաւ։ Այնտեղ մնացին քսան հոգու չափ Հարստօշիններ միայն։

— Դալի-Բաբայ, դարձաւ Սարհատը դէպի քահանան, քեզ հետ կը վեր առնես չորս հոգի եւ կը քշես քարաւանը դէպի Սալմաստ, մինչեւ արեւի դուրս գալը դուք կ'անցնէք Պարսկաստանի սահմանը, եւ Սալմաստում տեղային հայերի մօտ ողորմելիները ապահով կը լինեն, որովհետեւ այնտեղ են փախել բոլոր աղբակեցիք, որոնք ազատուել են քրդերի ձեռքից։ Սալմաստը պարսից երկիր է, այնտեղ տաճկաց քրդերը մօտ գործել չեն կարող։ Լսիր, ամենեւին ցոյց չը պէտք է տաս հայութիւնդ եւ գերիները չը պէտք է գիտենան, թէ ո՞վ ազատեց նրանց։ Պարսից սահմանից դու կը դառնաս քո ընկերների հետ եւ մեզ կը դռնես Որցի-ձորի մէջ, այն քարանձաւում, որ քեզ ծանօթ է։ Իսկ ես այդ անպիտաններին կը պահեմ կիրճի մէջ, մինչեւ դուք բաւական կը հեռանաք, եւ արեւը դեռ չը ծագած, բաց կը թողնեմ։

Դալի-Բաբան համբերութիւնը հատած, պատասխանեց.

— Անիծուած լինեմ, եթէ ես տէրտէր ժամանակս մի այսպիսի երկար քարոզ եմ տուել։ Օրհնած, ի՞նչ ես ծանր ու բարակ ամեն բան այսչափ բրդում. ես խօսոր չեմ սովորում իմ գործը։

— «Ուրիշ խրատը լսիր, եւ իմացածդ էլ քեզ պահիր», ասել են մեր պապերը, պատասխանեց Սարհատը ծիծաղելով։ — Հիմայ գնացէք։ Տէր ընդ ձեզ։

Քարաւանը սկսեց շարժուել դէպի Սալմաստայ կողմը ազատուած մարդու բոլոր արագութեամբ, որ դեռ նոր փախչում էր վտանգից։ Գիշերային լուութեան մէջ լսելի

էին լինում ջերմ օրհնութիւններ այն բազմաթիւ թշուառների բերաններից, որոնք արտասուալի աչքերով մերձենում էին դէպի իրանց ազատիչները...

Մի քանի օրից յետոյ ամբողջ Աղբակայ գաւառում տարածուել էր մի այսպիսի լուր, թէ Հարստօշինները բերելիս են եղել ահագին աւար եւ գերիների մեծ բազմութիւն Շատախի կողմերից, եւ թէ Ռաւանդները վրայ են թափուել եւ Սախկալ-Թութանի կիրճում խլել են Հարստօշիններից թէ աւարը եւ թէ գերիները, բայց ո՞ր են տարել, յայտնի չէ. Սարհատի եւ նրա խումբի մասին ոչինչ չէր խօսվում... Քրդերի մէջ միմեանցից աւար եւ գերիներ խլելը այնքան սովորական էր, որ ոչ ոքին չը զարմացրեց յիշեալ լուրը, եւ հայերի վրայ կասկածել անգամ չէին կարող, որովհետեւ հային անընդունակ էին համարում այդ գործին։ Իսկ Սարհատի խումբը իրան ձեւացրել էր Ռաւանդների կերպարանքով, որ Հարստօշիների հետ ցեղական թշնամութիւն ունէին։

## Ը.

Աղբակայ ամբողջ գաւառում ոչ մի հայ չէր մնացել. 24 զիւղեր բոլորովին աւերակ եւ դատարկ էին. բնակիչները մասամբ կոտորել էին եւ մասամբ գերի էին տարել քրդերը, իսկ մնացածները փախել էին Պարսից սահմանակից Սալմաստ եւ Սօմայի գաւառները, ասպատանելով տեղային հայերի մօտ։ Արշաւանքը այն աստիճան անակնկալ եւ յանկարծակի էր եղել, որ փախստականներն հազիւ կարողացել էին ազատել իրանց թշուառ զուլսը, իսկ տուն տեղ, կայք եւ անասուն, բոլորը թողել էին թշնամուն։



Ջալալէդդինի արշաւանքը նման էր մի սարսափելի հեղեղի, որ միանգամով չէ վերջանում, որ գալիս է, յետոյ ընդհատվում է, եւ կրկին կատաղի հեղեղը սաստկանում է նոր եւ նոր յորձանքներով: Նա սկզբում իր հետ ունէր հինգ հազար ձիաւոր միայն, որոնցմով դուրս եկաւ Աղբակից, դիմում էր դէպի Բայազէդ, որ կողմում եւ անց էր կենում, թողնում էր իր ետեւից աւերակներ եւ ամայութիւն: Եւ այնուհետեւ, նրա արշաւանքի ձայնը լսելով հռաւոր տեղերի քրդերը, խումբերով դուրս էին գալիս, եւ դիմում էին դէպի իրանց առաջնորդի բանակը: Այս վերջինները լրացնում էին, ինչ որ պակաս էր թողել Ջալալէդդինը: Հեղեղի յորձանքը այսպէսով կրկնվում էր, եւ մի եւ նոյն երկիրը մի քանի անգամ ենթարկվում էր ասպատակութիւնների:

Ջալալէդդինը, որպէս շէյխ եւ զօրավար, միայն էր, որ յանձն առեց քրդերի դիւաւորութիւնը, առաջնորդելու նրանց դէպի պատերազմի դաշտը: Բայց քրդերին առաւել լապէս զրգռողը եւ նրանց կատաղութիւնը ոգեւորողը էր մի ուրիշ շէյխ, որն իր տեղից չէր շարժուել, որն ամբողջ Բուրդիստանի հոգեւոր գլուխն էր համարվում, եւ ներգործում էր իր սրբազան թղթերով քրդերի զարայբէկներին, զազկներին եւ մուֆթիների վրայ: Դա Շէյխ Իբրաղուլահն էր: Այդ քրիստոնէութեան երդուեալ թշնամին թոյլ էր տուել ամեն տեսակ անգթութիւններ, եւ հրամայել էր ամենեւին չը խնայել...

Պատերազմի ժամանակ որպէս քրդերի, նոյնպէս եւ բոլոր մահմետական ցեղերի սպառազինութեան պատճառը լինում է՝ կոյր մոլեռանդութիւնը մի կողմից եւ կողոպուտի ու յափշտակութեան ծարաւը միւս կողմից: Նրանց մէջ խաղ են առնում երկու կրքեր՝ — հոգեւոր եւ նիւ-

թական. առաջինը լըուցանում է նա ոչ-մահմետականներին մորթելով, իսկ երկրորդին բաւականութիւն է տալիս նրանց կայքը եւ հարստութիւնը յափշտակելով: Եւ այս պատճառով Ջալալէդդինի զօրքը խիստ դանդաղ էր ընթանում. նա մի կողմից պէտք է հնձէր, բայց իր հունձը իր հետ տանել չէր կարող, — միւս կողմից, հարկաւոր էր հունձը տանել, հասցնել իրանց բնակութեան տեղերը եւ նորից վերադառնալ ու միանալ բանակի հետ եւ շարունակել ընթացքը դէպի Բայազէդ: Այս էր նրա զօրախումբի անդադար բաժանման եւ կրկին միաւորութեան պատճառը: Ջալալէդդինը իր ճանապարհը մաքրելով էր առաջ ընթանում դէպի Բայազէդ:

Բայց չէ կարելի միանգամայն ուրանալ քրդերի մէջ աղնիւ մարդիկ. նրանց մէջ կային եւ այնպիսիներն, որոնք զուրկ չէին բարի զգացմունքներից, որոնք չէին մասնակցում վատ գործի: Այս տեսակ մարդերից մէկն էր Օմար-աղան, իր հօտերով եւ երամակներով հարուստ քուրդը, որը մի փոքրիկ ցեղի դիւաւորն էր: Նա չը մասնակցեց Ջալալէդդինի արշաւանքին: Եւ լսելով անգութ ծերունիի դիւաւորութիւնը, նա յառաջագոյն եկաւ Բարդուղիմէոս առաքեալի վանքը եւ յայտնեց վանահայր Նղիադար վարդապետին թէ մի քանի օրից յետոյ ինչ դառն վիճակ էր սպասում Աղբակայ հայերին: Նա խորհուրդ տուեց վանահօրը օգուտ քաղել վանքի անմատչելի ամրութիւններից, եւ այդ նուիրական բերրը ընտրել որպէս մի պաշտպանողական դիրք, եւ այնտեղ հաւաքելով շրջակայ հայոց գիւղօրայքի հարստութիւնները, — այնտեղից ընդդիմանալ թշնամուն: Օմար-աղան խոստացաւ ինքն էլ միանալ վանահօր հետ եւ իր խոստմունքը կատարեց դործով, որովհետեւ նա էլ երկիւղ ունէր



Ջալալէդդինից, եւ նրա արշաւանքին չը մասնակցելու համար վախենում էր ենթարկուել շէյխի վճռական դրոշմութեանը: Եւ այս պատճառով իր տան հարստութիւնը նա հաւաքեց վանքի մէջ, եւ իր մարդիկներով պատրաստ էր հարկաւորած ժամանակ, միանալով հայերի հետ, ընդդիմանալ թշնամուն:

Եղեազար հայր սուրբը ընդունեց իր վաղեմի բարեկամի՝ Օմար-աղայի խորհուրդը, որի հաւատարմութեան վրայ կատարեալ վստահութիւն ունէր, եւ Բարդուղիմէոս առաքեալի վանքի շրջակայ հայոց գիւղօրայքի թէ բնակիչներին եւ թէ նրանց կայքը ու անասունները հաւաքել տուեց վանքի մէջ:

Բարդուղիմէոս առաքեալի վանքը այն հնադարեան վանքերից մէկն էր, որ իր գոյութիւնը պահպանում էր Լուսաւորչի ժամանակներից: Ամբողջ տաճար եւ վեց դար, պատերազմելով բնութեան խստութիւնների եւ բարբարոս ձեռքերի դէմ, այդ վանքը կանգնած էր, որպէս մի հսկայական յիշատակարան կրօնասէր հայի նախկին ճարտարապետութեան: Նա վկայ է եղել բազմաթիւ եղեռնական անցքերի. նա տեսել էր կրակապաշտ պարսիկների, արաբների եւ մոնղոլների բոլոր անգթութիւնները: Նա իր հոյակապ կողքերի վրայ կրում էր բազմաթիւ յիշատակարաններ, թէ քանի՛-քանի՛ անգամ կործանուած է եղել, եւ կրկին հայկական ջերմեռանդութիւնը նորոգել է նրան:

Այդ վանքը բաւական ամուր դիրք ունի. նա կառուցած է մի բլուրի բարձրաւանդակի վրայ, որի գագաթը արհեստական բանուածքով աւելի եւս բարձրանալով, նրա վրայ դրած է վանքի հիմնարկութիւնը: Բլուրի երեք կողմից շրջապատում է ահագին խորութեամբ մի ձոր,

որի միջով հոսում է Տիգրիսի վերին ճիւղերից մէկը, որ սովորաբար կոչվում է «Վանքի գետ»: Բլուրի չորրորդ կողմը միանում է մի լեռնային թեւքի հետ, որի վրայ դրած է մի հայոց դիւղ, որը վանքի սեփականութիւնը լինելով, կոչվում է «Վանքի դիւղ» եւ նա հարկւր քայլ հաղիւ հեռու կը լինի վանքից:

Վանքը պատած է պարիսպներով եւ աշտարակներով. նա ունի իր մէջ, բացի հոյակապ տաճարից, շատ խուցեր միաբանութեան համար եւ շատ ուրիշ ծածկոցներ վանքային տնտեսութեան, մշակների եւ անասունների համար: Երբ որ Ջալալէդդինի արշաւանքի ձայնը հասաւ այս կողմերը, վանքի օթեւանները լիքն էին Աղբակայ բնակիչներով, իսկ նրանց թանգազին հարստութիւնները պահուած էին տաճարի գաղտնի պահարաններում: Եւ «Վանքի դիւղում» հաւաքել էին նրանց անասունները:

«Վանքի գետը», որ հոսում էր ձորի միջով, իր եզերքում թողնում էր բաւական ընդարձակ եւ հարթ տարածութիւն, որ պատած էր խոտով, եւ ներկայացնում էր մի կանաչազարդ հովիտ, որ գարնան սկզբում վառվում էր դեղնագոյն ծաղիկներով: Այս մարգագետինների վրայ արածում էին վանքին պատկանող ձիաների երամակները:

Մի առաւօտ սարսափելով նկատեցին, որ յիշեալ հովտի վրայ, գետի ավերի մօտ, կազմուած էին բազմաթիւ վրաններ: Զրդերի խաշնարածները իրաւունք չունէին վանքի մօտ, նրա կալուածների վրայ գետեղել իրանց չադրները. ուրեմն դրանք լինելու էին այն ինքնակոչ հիւրերը, որոնց սոսկալի երկիւղով սպասում էին վանականները: Ամենքը մեծ տաղնապի մէջ ընկան: Ամեն կողմից ոչխարներ, կովեր եւ երկրագործական անասուններ սկսեցին



Քշել դէպի դիւղը: Տագնապը աւելի մեծացաւ, երբ մի հովիւ լուր բերեց վանահօրը, թէ Զաւարէդդինը բազմաթիւ քրդերով իջեւանել է վանքի մարդերի վրայ:

Վանահայր Նղիազար վարդապետը մի վեթիսարի մարդ էր: Թէեւ նրա ականջները ծանր էին լսում, բայց անդադար դործ ունենալով քրդերի հետ, որպէս ասում են, նա «կէս քուրդ» էր դարձել, այսինքն աներկիւղ այրական սիրտ էր ստացել: Նրբ լսեց հովիւի բերած լուրը, նա ամենեւին չը զգաց այն յուսահատական երկիւղը, որ տիրում է թուլասիրտ մարդերին վտանգի ընդհանրում: Վանահայրը նոյն միջոցում նստած էր իր փոքրիկ խուցի մէջ եւ նրա մօտ գտնւում էր մի քուրդի իշխան բաւական համակրական գէմքով: Վերջինը Օմար-աղան էր: Նրկուն էլ դուրս գնացին, երբ լսեցին հովիւի խօսքերը: Նրանք դիմեցին դէպի վանքի արեւելեան պարսպի կողմը, որտեղից երեւում էր շէյխի բանակը: Թէ՛ վանահայրը եւ թէ՛ քուրդ աղնուականը, զիտակները ուղղելով դէպի բանակը, մի քանի ընդհանրական նայում էին:

— Նա, է, ասաց Օմար-աղան վրդովուած ձայնով.

— Տերունի աւազակը բաւական բազմութիւն է հաւաքել իր շուրջը:

— Ի՞նչ պէտք է արած, հարցրեց վանահայրը ոչ սակաւ խռովութեամբ:

— Ուրիշ հնար չը կայ, պատասխանեց քուրդը այժմ աւելի սառն կերպով. — դուք պատուիրեցէք ժողովրդին հաւաքուել վանքի պարիսպների մէջ, զոները փակել տուէք. վանքը բաւական ամուր է պաշտպանուելու համար:

— Նա էլ այսպէս եւ մտածում, պատասխանեց վարդապետը. — ես վանքի պահարաններում բաւական

հրացաններ եւ վառող ունեմ թաքցրած, զգուշութեան համար վաղուց պահում էի ինձ մօտ. հիմայ հանել կը տամ. պէտք է բաժանել, որոնք նետելու շնորհք ունեն. ես ճանաչում եմ շատերին մերիններից, ու այդ դործին ընդունակ են:

— Իմ մարդիկներն էլ շուտով կը գան, ասաց քուրդը. — ժամանակ կորցնել պէտք չէ, ինչ որ անելու էք, մի ուշացնէք:

Վանահայրը հեռացաւ հարկաւորած պատրաստութիւնները կարգադրելու: Բայց Օմար-աղան դեռ կանգնած էր առաջուայ տեղում եւ դիտակը ձեռին նայում էր: Քրդերի մէջ շատ աղանդներ կան. այդ մարդը պատկանում էր մի աղանդի, որ հակառակ էր շէյխի դաւանութեանը: Աղանդների տարբերութիւնը նոյն ազդեցութիւնն ունի քրդերի վրայ եւ նոյն խտրութիւններն է ձգում նրանց մէջ, որպէս ցեղական տարբերութիւնները, մանաւանդ երբ յարաբերութիւնները կտրուած են լինում թշնամական հանգամանքներով: Օմար-աղայի ցեղը այսպիսի պատճառներով բաժանուած էր այն ցեղերից, որ հաւաքուել էին շէյխի շուրջը:

Բայց վանահօր դիտաւորութիւնը սաստիկ արգելքների հանդիպեցաւ ժողովրդի կողմից. ոչ ոք չը ցանկացաւ համաձայնուել նրա հետ: — «Մեզ ամենիս կը կոտորեն, ասում էին նրանք, — ում վրայ ենք ձեռք բարձրացնում. քրդի մի մագլին դիպել անկարելի է. մեզ կենդանի կ'այրեն, մեր որդիքը, մեր կանայքը կը կոտորեն: Մենք նրանց չենք ընդդիմանայ, թող գան, ինչ որ ուզում են, թող տանեն, միայն մեզ եւ մեր որդիներին խնայեն...»

— Նր գան, ձեր բոլոր ունեցածը կը տանեն եւ ձեզ ու ձեր որդիներին չեն խնայի... ասում էր վար-



դապետը արտասուքը աչքերում: — Ինձ ականջ դրե՛ք. մեր սուրբ վանքը կը պահպանէ մեզ. մեր յոյսը թող Նրա վրայ դնենք... Մեր մէջ շատ տղամարդեր կան... Օմար-աղան էլ մեզ հետ կը լինի...

Բայց ոչ ոք չէր ուզում լսել նրան:

— «Անկարելի բան է, գոռում էր ամբոխը — եթէ դու ուզում ես մեզ փրկել, վեր առ քեզ հետ տէր-տէրներին եւ տանուտէրներին, գնա՛ շէյխի մօտ, նրա ոտները համբուրիր, աղաչիր, պաղատիր, ասա՛, ինչ որ ուզում է, կը տանք, միայն թէ մեզ կենդանի թողնէ»...

Քաջասիրտ վարդապետը շատ խօսեց, երկար յորդորում էր եւ խրախուսում էր, բայց թուլասիրտ եւ ստրկացած ամբոխը չընդունեց նրա խորհուրդը: Վերջը նա ստիպուած եղաւ առնել իր հետ մի քանի ծերունիներ եւ քահանաներ ու դիմել շէյխի սօտ:

Այն ժամանակ Օմար-աղան մօտեցաւ նրան, եւ ասաց այս խօսքերը.

— Ես գիտէի, որ այսպէս կը լինէր... բայց դու զուր ես գնում. քեզ կը բռնեն, կը պահեն, եւ գուցէ կը սպանեն...

— Պիտի գնամ, ճար չունեմ, թող սպանեն... ասաց վշտացած վարդապետը: — Ժողովուրդը ինձ հանգիստ չէ թողնում...

— Ինձ այսուհետեւ աւելորդ է այստեղ մնալ... ասաց քուրդ ազնուականը:

— Ես էլ խորհուրդ չէի տայ մնալու համար, պատասխանեց վանահայրը. — գնացէ՛ք, ծէր ընդ ձեզ. միայն ընդունեցէ՛ք կատարել իմ վերջին խնդիրը. առէ՛ք այդ բանալին, նոյն պահարանի մէջ, ուր թաքցրել եմ ձեր կայքը, այնտեղ երկու արկղներում պահուած են

վանքի սրբութիւնները. տարէ՛ք ձեզ հետ, թող աւազակների ձեռքը չընկնեն: — Դուք միշտ այնքան հաւատ էք ունեցել դէպի մեր վանքը, որ ոչ մի քրիստոնեայ չէ ունեցել:

— Կը տանեմ, միամիտ կացէ՛ք, պատասխանեց քուրդը: — Բայց դուք վեր առէ՛ք ձեզ հետ իմ մարդերից մէկը. նա հեռուից կը հետեւի ձեզ. եւ եթէ ձեզ բռնելու կամ պահելու լինեն, նա ինձ խնայում կը տայ:

Վանահայրը համբուրուեցաւ իր բարեկամի հետ եւ սկսեց դիմել շէյխի բանակը: Նա ամենեւին յոյս չունէր, թէ կը վերադառնայ այնտեղից եւ միւս անգամ կը տեսնի իր բարեկամին:

Նոյն միջոցում հասան Օմարի մարդիկը, բերելով իրանց հետ երեսունի չափ աւելորդ ձիաներ, եւ նա բարձել տուաւ իրան պատկանող իրեղէնները, որ քանի որ առաջ ապահովութեան համար բերել էր այնտեղ. նա չը մոռացաւ իր հետ վեր առնել եւ այլ երկու արկղներ, որոնց մասին խնդրել էր, դռնապանը բացեց պարսպի գաղտնի դռները, եւ ազնիւ քուրդը խիստ տխուր սրտով համբուրեց տաճարի սուրբ սեղանը, եւ հեռացաւ վանքից:

Վանահայր Նղիազար վարդապետը գնաց շէյխի բանակը, եւ այլ եւս չը վերադարձաւ այնտեղից...

Մի քանի ժամից յետոյ քրդերը խուճ-խուճ մօտանալիս «Վանքի գիւղը», առաջ սկսեցին անասունները դուրս քշել, յետոյ տները դատարկեցին, եւ նրանց մէջ գտնուած իրեղէնները բառնալով զրապանների վրայ, ճանապարհ դրեցին: Երբ գիւղի հետ իրանց հաշիւը վերջացրել էին, մօտանալով վանքը, այնտեղ էր ամբարուած



շրջակայքի բոլոր հարստութիւնը. — սկսեցին դուրս գրել: Ողորմելի ժողովրդի լացն ու կոծը, նրանց դառն աղաղակները ամենեւին չէին ազդում յափշտակիչների անգութ սրտերին... ամենափոքր ընդդիմադրութիւնը պատասխանվում էր փրով եւ ատրճանակով:

Ահա այս սարսափելի անցքը անցել էր, որ Սարհատի խումբը, Սախկալ-Թութանի քաջագործութիւնից յետոյ, մի գիշեր դիմեց դէպի Բարդուղիմէոս առաքեալի վանքը:

Ի՞նչ էր որոնում թշուառ երիտասարդը այն կիսով չափ կործանուած եւ դատարկացած վանքի մէջ...

Թ.

Մութը դիշեր էր: Ամպամած երկնքի վրայ ոչ մի աստղ չէր երեւում. երկինքը ու գետինը, կարծես, միացած էին թանձր-սեւաթուր զանգուածով: Ամեն ինչ լուռ էր. միայն գիշերային սառն քամին գուշակում էր մրրիկ եւ անձրեւ: Հեռաւոր լեռների վրայ կայծակը երբեմն փայլատակում էր, եւ որոտման խուլ ձայնը մանր զղրղիւններով տարածվում էր խաւարի մէջ թաքնուած սարերում:

Գիշերային այս սոսկալի պահուն մի քանի ստուերներ, թափառաշրջիկ ուրուականների նման, խաւարի մէջ շարժվում էին. նրանք միացան, մի փոքրիկ խումբ կազմեցին, կարծես, մի բանի վրայ խորհելու համար. յետոյ կրկին բաժանուեցան եւ առանձին-առանձին սկսեցին դիմել դէպի Բարդուղիմէոս առաքեալի վանքի գիւղը, որ համարեա թէ վանքի մօտումն էր:

Գիւղը նոյն ժամուն խաւար եւ լուռ էր, եւ մի ընդարձակ գերեզմանատան նման, ամեն շարժում, ամեն

կենդանութիւն հանգչել էր այնտեղ: Բայց մի տեղից միայն երեւում էին լոյսի նշոյններ. դա վանքի հսկայական շինուածքն էր, որ կանգնած էր բարձր բլուրի գլխին, որի շուրջը բացվում էր մի խորին անդունդ, որ կորած էր մթութեան մէջ. միայն այնտեղից հոսող գետը իր զայրացած գոռում-գոչումներով վրդովում էր տիրող լուութիւնը:

Եթէ մի մարդ նոյն ժամուն մտնելու լինէր յիշեալ շինութեան մէջ, որտեղից լոյս էր նշմարվում, նրա աչքերի առջեւ ներկայանալու էր մի այսպիսի տխուր տեսարան. — գեղեցիկ տաճարը բոլորովին մերկացել էր իր փառահեղ զարդարանքից, նրա հոյակապ կամարների ներքոյ տիրում էր դատարկութիւն միայն. ոչ խաչեր, ոչ գրքեր, ոչ պատկերներ, ոչ ջահեր, ոչինչ չէր երեւում. սուրբ սեղանը ներկայացնում էր սպանդանոցի նման մի բան, որ շաղախուած էր արիւնով...

Տաճարի մի կողմում կապած էին ձիաներ, որ խոտ էին ուտում. իսկ միւս կողմում նստած էին մի խումբ քրդեր: Մէջտեղում վառվում էր մի ահագին խարոյկ: Տաճարի մէջ գտնուած փայտեղէնները — աթոռները, գրակալները, դռները — հետզհետէ ջարդում էին եւ ձգում խարոյկի վրայ, բոցերը սաստկացնելու համար: Կրակի մէջ դրած էին մի քանի շամփուրներ եւ պղնձե լոյսեր, որոնք այն աստիճան շէկացել էին, որ հաղիւ որոշվում էին կտրւած ածուխներից:

Կրակից ոչ այնքան հեռու, թեւքերը եւ ոտները չուաններով կապկապած մերկ սալայտտակի վրայ, ընկած էին մի քանի մարդիկ, եւ սարսափելի խուլութեան մէջ սպասում էին մի դառն ճգնաժամի: Եթէ մի մարդ կը ցանկանար տեսնել գեհեւի դատապարտեալների յուսա-



հատական երեսները, — այդ թշուառների դեմքը նոյն օրինակն էր կրում:

Նրանցից փոքր ինչ հեռու, խառնիխուռն կերպով, դիզուած էին զանազան իրեղէններ, որ կացուցանում էին վանքի անօթեղէնները եւ նրա նուիրական կարասիքը:

Քրդերից մէկը վերկացաւ եւ մօտեցաւ կապուածներին այս խօսքերով.

— Ասացէք, անհաւատներ, էլ ինչ ունէք թագրած. ասացէք, մի պահէք, թէ չէք ուզում շան նման սատկել: Տեսնում էք այն կարմրած շամփուրները. — ձեզ համար են պատրաստուած:

— Աղայ, քո ոտներին մատաղ լինէնք, պատասխանեցին կապուածները ողորմելի ձայնով. — հէնց էն էր, ինչ որ կար. էլ ուրիշ ոչինչ չէ մնացել, եթէ մի բան պահած լինէնք. թող Աստուած մեր աչքերը քոռացնէ, թող մեր հոգին դժոխքի բաժին լինի:

— Սուտ էք ասում, անիծուած շներ, գոռաց քուրդը. — այդ վանքում մի թագաւորի հարստութիւն կար, ի՞նչ եղաւ:

— Աղայ, քո ոտների հոգը դառնանք, խղճա՛ մեզ, մի սպանիր... թող Աստուած ձեզ փչացնէ, եթէ մեր լեզուից սուտ խօսք դուրս գայ: — Այս էր, ինչ որ մնացել էր. բոլորը տարան, ոչինչ չը թողեցին... Դուք լաւ գիտէք, այս մի քանի օրում այս վանքը քանի՛ քանի անգամ կողոպտուեցաւ... ծով լինէր, կը ցամաքէր. սար լինէր, կը հալուէր...

Խօսող քուրդը, որ իր խմբի գլխաւորն էր երեւում, դարձաւ դէպի ընկերներից մէկը.

— Այս գաւուրները մինչեւ շամփուրների համը չը տեսնեն, ուղիղ չին ասելու: Բերեցէք:

Քրդերից մի քանիսը մօտեցան կապուածներին եւ սկսեցին մերկացնել նրանց, իսկ մի քանիսն էլ կրակից դուրս բերեցին կարմրած շամփուրները:

— Սկսեցէք, հրամայեց առաջին խօսողը. — միայն խաչի ձեւով, դրանք շատ են սիրում խաչը:

Դահլիճները սկսեցին կարմրած շամփուրներով խաչաձեւ դադել կապուածների մերկ կուրծքը եւ նրանց մարմնի ուրիշ մասները: Նրակի նման շիկացած երկաթը այրում էր եւ ջրջ-ջրջալով խրվում էր կենդանի մսի մէջ... եւ մուխը ճենճային խանձահոտութեամբ վեր էր բարձրանում: Մի փոքր սառած երկաթները կրկին կրակի մէջն էին դնում եւ վեր էին առնում նորերը: Դժու խային գործողութիւնը շարունակվում էր: Թշուառները հառաչում էին, մրմնջում էին, եւ ցաւալի ձայներ էին հանում...

— Մի անգամով մորթեցէք ի սէր Աստուծոյ, թող շուտ մեռնենք, գոռում էին նրանք:

Այսպէս անդադար մրմնջում էին ողորմելիները, բայց գործողութիւնը դեռ շարունակվում էր. մինչեւ այլ եւս հասկանալի չէին լինում նրանց խօսքերը, միայն լսել էին լինում խուլ հառաչանքներ...

Բաւական է, հրամայեց խմբի գլխաւորը եւ դարձաւ դէպի կապուածներից մէկը, ուրիշ դեռ ձեռք չէին տուել:

Այս թշուառականը քահանայ էր:

— Բեզ պահեցինք վերջումը, որ քո տանջանքը աւելի փառաւոր լինի, ասաց քուրդը հեգնական եղանակով:

Տեսնում ես կրակի մէջ այն կարմրած պղնձէ թասը. նա թագի շատ նմանութիւն ունի. նրանով պիտի պսակում քո գլուխը, որովհետեւ քահանայ ես:



Քաջանան, շարժուած կրօնական զգացմունքով, պատասխանեց.

— Իմ Տէրը փշեայ պսակ կրից, իսկ նրա ծառան սիրով կ'ընդունէ պղնձէ թասը... Բայց միտքդ բեր, աղայ, որ վերեւումը Աստուած կայ, որն այս բոլորը տեսնում է, որ մեր ամենիս տէրն է. Նա անպատիժ չի թողնի այն մարդուն, որը թափում է անմեղ արիւն: Ինչու ես ի դուր տանջել տալիս մեզ: Իմ ընկերները սուտ չասացին, վանքումը ուրիշ ոչինչ չէ մնացել. ինչ որ կար, բոլորը տուեցինք ձեզ: Բոլոր զաղտնի պաշարանները բաց արեցինք ձեր առջեւ: Եւ դուք այնքան անգութ եղաք, որ Բարդուղիմէոս առաքեալն սուրբ գերեզմանն էլ քանդեցիք, կարծելով թէ այնտեղ գանձ կայ թաղցրած: — Ինչ որ կար, տարաւ Զաւլէդդինը, նրանից յետոյ տասն անգամից աւելի քրդերը մտել են այս վանքը... դուք վերջինն էք...

— Սուտ ես խօսում, կեղծաւոր շուն, դռնաց դաշնը. — բերէ՛ք թասը:

Քրդերից մէկը ունեւէքով դուրս հանեց կրակի միջից կարմրած թասը. քաջանայի արեղարդ գլուխը բաց արին, եւ պատրաստվում էին հրաշէկ արախչիներ նրա գլխին դնել: Աստուծոյ սեղանի սպասաւորը նահատակի համբերութեամբ սպասում էր բարբարոսական դործողութեանը: Նա անմռունչ էր եւ լուռ. միայն նրա շրթունքները շարժվում էին, եւ օրհասական տաղնապի մէջ խուլ կերպով աղօթում էր...

Յանկարծ որոտացին ատրճանակներ, եւ սուրբ տաճարը վառօդի ծխով լցուեցաւ: Սարսափը տիրեց բոլորի վրայ: Քրդերից մի քանիսը զլորուեցան, ընկան, իսկ միւսներին բռնեցին զօրեղ բազուկներով եւ սկսեցին կապկա-

պել: Այս բոլորը կատարուեցան մի քանի րոպէում եւ խորին լուսթեան մէջ: Միայն քաջանայի ձայնն էր լսելի լինում, որ ասում էր.

— Ի սէր Աստուծոյ, մի սպանէք, թողէք, ինչ որ կամենում են, թող անեն մեզ հետ. դրանց ձեռք մի՛ դիպցնէք. կը կոտորեն հայերին...

Ողորմելի քաջանան, թէեւ չը գիտէր, թէ ովքեր էին այն յանկարծահաս փրկիչները, բայց վախենում էր, որ հայոց վանքի տաճարում կատարուելով սյապիսի սպանութիւններ, տեղային քուրդերի վրէժխնդրութիւնը կը հրաւիրէին ամբողջ հայերի վրայ, — թէեւ քրդի սրտում մի այսպիսի կասկած երբէք ծնուել չէր կարող, թէ երկչոտ հայը կարող է մարդ սպանել...

Նոր եկաւորների երեսները բոլորովին կապած էին, միայն աչքերն էին երեւում: Նրանք հազնուած էին քրդի հագուստով եւ խօսում էին քրդի լեզուով: Թուով շատ չէին նրանք, բայց այնպէս անակնկալ վրայ տալով, կառողացան առաջիններից մի քանիսին սպանել եւ մնացածներին կապելով դուրս տանել: Ուր տարան յայտնի չէր: Միայն քառորդ ժամից յետոյ երկուսը կրկին վերադարձան, եւ արձակելով քաջանայի ու նրա կիսակենդան ընկերների կապանքները, ասացին նրանց.

— Դեռ բաւական գիշեր կայ. մինչեւ արեւի ծագելը դուք կարող էք մօտենալ Պարսկաստանի սահմանին. այնտեղ ապահով կը լինէք: Այստեղ կան պատրաստի ձիեր. բարձեցէ՛ք, ինչ որ հաւաքուած է այստեղ, որ պէտք է քրդերը տանէին. եւ դուք նստեցէ՛ք նրանց ձիաները, շուտով ճանապարհ ընկէ՛ք:

— Իմ ընկերների մէջ կեանք չէ մնացել, ասաց քաջանան:



— Մեզանից երկուսը ձեզ հետ կը գան, պատասխանեցին անծանօթները:

Քահանան խոնարհուեցաւ եւ կամենում էր զրկել նրանց ոտքերը:

— Այդ հարկաւոր չէ, ասաց նրանցից մէկը. — պատրաստուեցէք շուտ հեռանալու այստեղէ:

— Ես չը պէտք է գիտենամ, ո՞վ է աղատում մեզ, հարցրեց քահանան:

— Ո՛չ, դու չը պէտք է գիտենաս, ասեցին նրան:

— Եւ ձեր ինչ ազգից լինե՞լ:

— Այս էլ պէտք չէ գիտենալ:

Մի քանի ընկերները անծանօթները պատրաստեցին քրդերի ձիաները, որ կապած էին տաճարի մէջ եւ այնտեղ դիզուած իրեղէնները լցնելով խուրջիկների մէջ, կապեցին նրանց վրայ: Յետոյ կարմրած շամփուրներից վերաւորուած թշուառներին նստացրին բեռների վրայ եւ ճանապարհ դրին:

Քահանան դեռ իր ձին չը հեծած, կրկին անգամ մօտեցաւ անծանօթներին եւ ասաց.

— Գոնէ թոյլ տուէք, օրհնեմ ձեզ:

— Այդ եւս հարկաւոր չէ, ասաց նրանցից մէկը,

— միայն դու պատասխանիր, ինչ որ կը հարցնեմ քեզ:

— Հարցրէք:

— Այս վանքի զիւղումը ոչ ոք չէ՞ մնացել:

— Մի հոգի էլ չը կայ:

Ի՞նչ եղան:

— Մի մասը գաղթեց դէպի Պարսկաստան, մի մասը կոտորեցին, մի մասն էլ գերի տարան:

— Դու ճանաչում էիր այս զիւղումն ո՞չ Ե... անունով մէկին, որ տանուտէր էր:

— Ճանաչում եմ. ես ինքս վանքի զիւղի քահանան եմ:

— Գիտե՞ս, ինչ եղաւ նրա ընտանիքը:

— Տանուտէրին սպանեցին. որդիքը տանը չէին, աղատուեցան, բայց աղջկան տարան քրդերը:

Վերջին խօսքը կայծակի նման դիպաւ անծանօթի սրտին. նա մի քանի ընկերներին շփոթութեան մէջ մնաց, յետոյ հարցրեց.

— Եթէ ասէիր ինձ՝ ո՞ւր տարան, կամ ինչ ցեղից էին քրդերը, քեզանից շնորհակալ կը լինէի:

— Թէ ո՞ւր տարան, այս ես ասել չեմ կարող. բայց տանողները շեշակների ցեղիցն էին. Զօլախ-Ահմէթ մարդիկը:

— Բաւական է, վերջացրեց անծանօթը: — Հիմա կարող եք գնալ:

Քահանան իր ընկերների հետ հեռացան: Երկու հոգի անծանօթներից տարան նրանց ճանապարհ դնելու մինչեւ պարսից սահմանը: Վանքի տաճարի մէջ մնացին տաններկու հոգի անծանօթներից: Այն ժամանակ նրանցից մէկը բաց արեց իր կապած դէմքը, երեւի, փոքր ինչ ազատ շունչ առնելու համար: Եւ դեռ վառվող խարոյկի լուսով կարելի էր տեսնել Սարհատի մեռելի նման զուռնաթափուած երեսը...

Եւ նստեց կրակի մօտ մի փոքր հանգստանալու համար իր հոգեկան խռովութիւններից: Նրա միւս ընկերները կտրատում էին ահաբեկ վայրենի խողի մարմինը, անց էին կացնում իրանց հրացանների սոււժանների վրայ, եւ խորովում էին. միայն Մըստօն իր կարեկցական աչքը չէր հեռացնում իր տիրոջ երեսից, եւ կարծես, աշխատում էր կարգալ այն սպանուած դէմքի



վրայ ինչ որ ալեկոծում էր նոյն ժամին նրա վշտահար սիրտը:

Անբախտ երիտասարդ, նա ունէր մի միտիթարու-  
թիւն միայն, նրանից եւս զըկուեցաւ: Նա յոյս ունէր  
այստեղ, այս վանքի մօտակայքում գտնել այն նազելի  
արարածին, որին պատկանում էր իր սիրտը, որին միայն  
սիրում էր իր համար ատեն շնորհակալ մէջ: Բայց նա  
չը կար, մի դառն վիճակով անհետացել էր նա...

Քաջերի սրտում, կանանց վերաբերեալ, բաց ի սե-  
րից, կայ եւ մի ուրիշ զգացմունք, որին բաւական ան-  
համապատասխան բառերով կոչում ենք նախանձ,  
խանդ, զէյրաթ. — դա այն զգացմունքն է, որ ցա-  
մաք խօսքերով բացատրել անկարելի է: — Դա կնոջ  
նուիրագործութիւնը յարգելու մի կիրք է, որի համար  
Հելենները ամբողջ տասը տարի կուռեցան Տրոյիայի պա-  
րիսպներին տակ:

Սարհատը չէր վշտանում այն պատճառով միայն,  
որ կորցրել էր իր սիրելի էակը, այլ առաւել նրա հա-  
մար, որ նա այժմ գտանվում էր անհարազատ եւ ան-  
մաքուր ձեռքերում... Բայց ո՞րքան այնպիսի անմեղ  
արարածներ նոյն վիճակին էին ենթարկուել. նրանց հա-  
մար ո՞վ էր հոգացողը: — Դուցէ ծնողքը, անբախտ  
հայրն ու մայրը, եթէ կենդանի էին թողել նրանց:  
Բայց հոգում էր ազգը, հայ ժողովուրդը: Ոչ. դրա  
համար պէտք է հելենական նախանձախնդրութիւն ու-  
նենալ...

Մտնելով վանքի տխուր կամարների ներքոյ, Սար-  
հատի սրտում կրկին բաց կղան հին-հին վէրքերը: Այս  
սրբարանը խիստ խորին յիշատակներով կապուած էր նրա  
հոգու հետ: Այստեղ անցուցել էր նա իր մանկութեան

ամենաթանգագին տարիները. այստեղ յանձնել էին նրան  
աղօթող աբեղաների հսկողութեան ներքոյ ուսանել ինչ  
որ կրօնը եւ սուրբ գիրքը ներշնչում է մարդու մէջ,  
ինչ որ հանգցնում է վառ զգացմունքը, մեռցնում է  
հոգին, բթացնում է միտքը... Եւ մի եւ նոյն վանքի  
պարիսպների մօտ մի գեղեցիկ հրեշտակ ոգեւորեց նրան  
սրբազան յափշտակութեամբ. նա կրկին կենդանացրեց  
վանական ժանտախտից մեռած սիրտը, եւ փրկարար ձեռ-  
քով խաւարից դուրս քաշեց նրան եւ ձգեց լոյս աշ-  
խարհ... Իսկ այժմ չը կար այն հրեշտակը...

Մինչ թշուառ երիտասարդը ընկղմուած էր իր  
տխուր մտախոհութիւնների մէջ, նրա ընկերները կազմել  
էին մի ճոխ սեղան, որ յիշեցնում էր Հոմերոսի հերոս-  
ներին: Գինին ահագին գաւաթներով պտրտվում էր  
ձեռքից ձեռք. եւ խորովածը արիւնաթաթախ դուրս էին  
քաշում շամիրներէից: Նրանցից ոչ ոք չէր ուզում  
վրդովել Սարհատի ողբալի մաայուցութիւնը, եւ այս  
պատճառով չէին հրաւիրում իրանց հետ սեղանակից  
լինելու: Բայց նա արթնացաւ, երբ Դաւիթ-Բաբան, բաժակը  
ձեռին կանգնած եւ, երեսը դէպի տաճարի բեմը դար-  
ձած, ճառում էր այս խորհրդաւոր խօսքերը.

«Ո՞վ հայրեր, ո՞վ պապեր, այս գաւաթը խմում  
եմ, բայց առանց նուիրելու ձեր ոսկորներին: Եթէ դուք  
այս վանքերի տեղ, որոնցմով լիքն է մեր երկիրը, բերդեր  
շինէիք. — եթէ դուք սուրբ խաչերի եւ անօթների  
փոխարէն, որ սպառեցրին ձեր հարստութիւնը, զէնքեր  
գնէիք. — եթէ դուք այն անուշահոտութեանց տեղ, որ  
խնկվում են մեր տաճարներում, վառօդ ծխէիք, —  
այժմ մեր երկիրը բախտաւոր կը լինէր: Այլ եւս քուր-  
դերը մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի



եւ մեր կանայքը չէին յափշտակի... Այս վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք խլեցին մեր սիրտը ու քաջութիւնը. նրանք ձգեցին մեզ ստրկութեան մէջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը եւ թագը, առաւ խաչը եւ մտաւ Մանիայ այրը ճգնելու համար... — Ո՛վ հայոց հին աստուածներ, ո՛վ Անահիտ, ո՛վ Վահագն, ո՛վ Հայկ, նուիրում եմ այս բաժակը ձեր սուրբ յիշատակին, դուք փրկեցէք մեզ... ։

Այսպէս այս սարսափելի մարդը, որ մի ժամանակ քահանայ էր, իսկ այժմ աւազակ, դուրս էր թափում իր սրտի դառնութիւնները գինու բաժակի վրայ, որով ամեն մարդ ուրախ է լինում։

Երբ նա վերջացրեց, վեր կացաւ մի ուրիշ աւազակ, որին կոչում էին Քիթաբ-Դալըսը (գրքից խելագարուած), որ մի ժամանակ մանկավարժ էր, իսկ այժմ մոեւ էր Սարհատի արիւնախում խումբի մէջ։ Նա հետեւելով Դաւիթ-Բաբայի ոճին, այսպէս սկսեց իր տօաստը.

«Դժմում եմ այս բաժակը առանց նուիրելու ձեզ, ով գիւր եւ դպրութիւն, որովհետեւ դուք չեք տուիք մեզ այն, ինչ որ պահանջում է կեանքը եւ իրական աշխարհը։ Դուք լըրիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորքներով։ Դուք չեք ծանօթացրիք մեզ մարդկային պահանջների հետ եւ չեք տուիք այն, որ պէտք էր ապրելու եւ հանգիստ ու բախտաւոր ապրելու համար։ Դուք աւելի զարգացրիք մեր մէջ սեւ նախապաշարմունքը եւ փակեցիք մեր աչքերը լոյսը եւ ճշմարտութիւնը տեսնելու համար։ Դուք մեղանից զիականեր պատրաստեցիք, որոնց մէջ մեռած է ամեն մարդկային բարձր եւ վսեմ զգացմունք։ Դուք աւելի պնդացրիք մեր ստրկութեան

շղթաները եւ վարժեցրիք տանել բռնութեան ծանր եւ անպատիւ լուծը։ Ձեզ ենք պարտական, ով գիւր եւ դպրութիւն, մեր այժմեան դժբախտութիւններով. — դուք չեք տուիք մեզ առողջ միտք եւ առողջ գաղափար, եւ զրկելով մեզ ճիշդ եւ իրական գիտութիւնից, զրկեցիք եւ կեանքից... Ուրեմն, թող անիծուի մեր մամուլը, որ իր միով աւելի մրոտեց մեր սիրտը, միտքը ու հոգին... Եւ թող կեցցեն այն գրիչները, որ նոր հոգի կը ներշնչեն մեզ, որ կը նորոգեն մեր սպառնալուծները եւ կը ծանօթացնեն կեանքի իրական պէտքերի հետ եւ կը պատրաստեն մեզ մարդ լինել, մարդկային բոլոր կատարելութիւններով»։

Այսպէս էր խօսում այն մարդը, որին կոչում էին «գրքից խելագարուած», որին գրքերը յիմարութեան մէջ էին ձգել, — իսկ այժմ զգաստացել էր։

Այս բոլորը լսում էր Սարհատը, տխուր համակրութեամբ էր լսում նա, եւ այս խօսքերը, կարծես, առժամանակ մի նրան մոռանալ տուին իր ցաւը, որ այնպէս սաստիկ տանջում էր նրան։ Եւ նա թողեց այն նազելի անհատը, որի համար միայն մտածում էր, եւ սկսեց ընդհանուրի վրայ խորհել։ Սիրուհու մասնաւոր սէրը կորաւ անբախտ եւ օգնութեան կարօտ ժողովրդի սիրոյ մէջ, որի դատելքը ու կանայքը նոյնպէս գերութեան մէջ էին գտնվում։ Եւ այս պատճառով նա խիստ սառնութեամբ ընդունեց Մըստօի խօսքերը, որ նա մօտենալով նրան, լուրջութեամբ ասաց.

— Թող իմ տէրը չը տանջէ իր սիրտը. Մըստօն շատ հոտառութիւն ունի. եթէ ծովի խորքումն լինի «նա», կը գտնէ նրան, եւ եթէ երկինքը բարձրացած լինի, ցած կը բերէ։



Սարհատը ոչինչ չը պատասխանեց եւ տեսնել անգամ չը կարողացաւ, որ իր հաւատարիմ ծառան անհկատելի կերպով անհետացաւ վանքից...

Ժ.

Յուլիս ամիսը վերջանալու մօտ էր: Դժբախտ Բաշադէզը քրդերից, բաշեօղուկներից պաշարուելով, քանդուելով, կողոպտուելով, եւ իր թշուառ բնակիչները սրի բերանում ու գերութեան մէջ կորցնելուց յետոյ, — կրկին ռուսաց ձեռքն էր անցել: Սուլէյման փաշան յետ էր մղուել: Ջալալէգլինի հրոսակը ցրուած էր, եւ հարուստ աւարով ամեն մարդ իր տեղը դառնալու վրայ էր: Հին Բագրեւանդի ամբողջ զաւառը եւ պատմական Վաղարշակեալը բոլորովին դատարկացել էին իրանց հայ բնակիչներից: Ալաշկերտցի գաղթականները Նրեւանի նահանգում մուրացկանութիւն էին անում եւ նրանց թողած աւերակները դեռ ծխում էին մոխրի միջից...

Նրեկոյեան վերջալոյսը դեռ ճառագայթում էր սարերի զագաթների վրայ:

Մի տղամարդ միայնակ եւ դանդաղ քայլերով գնում էր լեռնային անձուկ ճանապարհով եւ խուլ-մեղա-մաղձական ձայնով երգում էր մի տխուր մեղեդի: Նա գնում էր անվճռական ընթացքով, կարծես, ակամայ ընտրել էր այն ուղին եւ բոլորովին վստահ չէր, թէ նա կը հասնէր այն նպատակին, որին դիմում էր ամենայն անձնութեամբ: Յանկարծ նրա ետեւից լսելի եղաւ մի ձայն.

— Ո՞վ ես. յետ քաշուիր:

Ճանապարհորդը դադարեց երգելուց, հրացանը ուսից վեր բերեց, եւ յետ նայելով, տեսաւ, որ գալիս էր մի ձիաւոր: Նա պատասխանեց.

— Անցիր:

Ձիաւորը մօտեցաւ, ողջունեց եւ ապա հարցրեց.

— Բարի լինի. ո՞ւր այդպէս:

— Բարի է, փառք Աստուծոյ, պատասխանեց ճանապարհորդը: — Նա Ջաֆար-բէկի հովիւն եմ, մեր չադրները շատ հեռու չեն այստեղից. մեր մատակներից մէկը այս երեկոյ կորաւ. պտուում եմ:

Յետոյ նա հարցրեց ձիաւորին.

— Դու ո՞ւր այդպէս, Աստուած յաջողի, գնում ես:

— Շէյխի բանակը, նամակ եմ տանում:

— Ումից:

— Սուլէյման-փաշայից: Բաները վատ են գնում Ղարսի մօտ: Փաշան կանչեց ու տասց. — ո՞վ կը լինի, որ այս նամակը երկու օրում հասցնի Շէյխին, կը ստանայ մի ըսւ փէշքաշ ու խալաթ: Նա մօտեցայ, զլուխ տուեցի ու ասացի. ձեր ոտքի հողը լինեմ. ես կը հասցնեմ, իմ արաբացի նժոյգը ծախ նման է թռչում: Նա ձեռքը քսեց մէջքիս, էֆէրիմ, ասաց եւ տուեց նամակը:

— Հիմայ ճրտեղ է Շէյխը:

— Նա հարցրի, ինձ ասացին, այստեղ մօտիկ Ղանլի-Դարայում (արիւնոտ ձոր) է իջեւանել, պատասխանեց ձիաւորը: — Դ՞նչպէս է, որ դու չես իմանում:

— Սարի հովիւը ճրտեղից կարայ իմանալ այս բաները. տեսնում ես, ամեն օր գալիս են, գնում են, մարդ չի իմանում, ի՞նչ խաբար է:



— Կրակ ունե՞ս, հարցրեց ձիաւորը, — չախմախիս քարը կորել է, ամբողջ օր չեմ ծխել, դուրսս դգում է դարձել:

— Կը գտնուի, պատասխանեց առաջինը, եւ ծոցից դուրս բերելով հրահան ու արէթ, սկսաւ զարկել կայծքարին:

Ձիաւորը կռացաւ, մօտեցրեց չեբուխը եւ նա վառած արէթը դրեց ծխախոտի վրայ: Նոյն միջոցին նա առիթ ունեցաւ լաւ զննել ձիաւորի դէմքը: Նա շնորհակալութիւն յայտնեց, եւ ծխելով, քշեց իր ձին:

Տասը քայլ հազիւ հեռացել էր ձիաւորը, նրա ետեւից գռուաց հրացանը եւ ողորմելին գլորուեցաւ ձիուց ցած: Ձին խրտնեցաւ եւ ճանապարհից դուրս եկաւ, իր հետ քարշ տալով դիակը, որի մի ոտը մնացել էր ասպանդակի մէջ: Ձին երկար վազվզում էր աւելի եւ աւելի կատաղելով, մինչեւ թամբը շուռ եկաւ փորի տակը, եւ նա կանգնեց: Այն ժամանակ եղեռնագործը մօտեցաւ, բռնեց ձիուն եւ սկսեց որոնել սպանուածի ծոցերը, գրպանները, որի մարմինը սաստիկ զարկուելով քարերին, բոլորովին ջարդուփշուր էր եղել: Նա գտաւ նամակը, որի հասցէն գրած էր շէյխի անունով, թաքցրեց իր ծոցի գրպանում, դիակը ձգեց մի փոսի մէջ, յետոյ ուղղելով սպանուածի ձիու թամբը, նստեց վրան, եւ սկսեց վազեցնել դէպի Ղանլի-Դարայ, ուր գտանվում էր Զալաէդդինի բանակը:

Նա հասաւ շէյխի բանակը, երբ արեւը մտել էր. բայց մութը դեռ բոլորովին չէր պատել աշխարհը: Նամակը նա հանեց իր ծոցից եւ խրեց գլխի չալմայի փաթաթի մէջ, այնպէս որ, նամակը կիսով չափ երեւում էր: Նա, որպէս սովորաբար ծրարում են նամակները արեւելքում,

մի երկայն խողովակաձեւ գալարուած թուղթ էր, որի մէջտեղից գօտիի նման փաթաթել էին մի ուրիշ թղթի կտոր եւ կնքել էին:

— Ի՞նչ մարդ ես, հարցրեց նրանից բանակի պահ-նորդներից մէկը:

— Սուրհանդակ, պատասխանեց նամակաբերը եւ համարձակ քշեց իր ձին դէպի շէյխի վրանը:

Այդ մարդը Մըստօն էր:

ԺԱ.

Բարդուղիմէոս առաքեալի վանքի սարսափելի անցքից յետոյ, զիշերը վանքում մնալով, իսկ առաւօտեան դեռ արեւը չը ծագած այնտեղից հեռանալու ժամանակ, Սարհատը նոր նկատեց, որ Մըստօն չը կար: Նրա ընկերները կասկածանքի մէջ ընկան, մի գուցէ պատանի քուրդը մատնէր նրանց: Նա այնքան խորամանկ էր եւ յանդուգն, որ ամէն բան սպասելի էր նրանից:

— Նա Մըստօնի ազնուութեան վրայ կասկածել չեմ կարող, ասաց Սարհատը. — եւ աւելի այն պատճառով, որ նա քուրդ է: Բուրդը կեղծ մարդ չէ. թէ թըշ-նամութեան մէջ, թէ բարեկամութեան մէջ նա իր գոյնը չէ փոխում:

Բայց Մըստօն ամբողջ երեք օր չերեւաց: Յետոյ յայտնուեցաւ նա:

— Դուայ, եղաւ նրա առաջին խօսքը, փաթաթուելով Սարհատի վզին:

— Ո՞ւմ գտար, հարցրեց Սարհատը շփոթուելով:

— Ասլին. նրան, որին դու սիրում ես:

Սարհատը ուրախութիւնից մի տեսակ արբեցուածեան մէջ ընկաւ:

ՀԱՆՔԱՆԻՊԵՆ



Մըստօն մի ըստ միօջէ սկսեց պատմել իր հանդիպելը փաշայի սուրհանդակի հետ, նրան սպանելը, յետոյ նամակն առնելով, եւ ինքն սուրհանդակ ձեւանալով, շէյխի բանակը գնալը եւ այնտեղ գերի աղջկանց թուում Ասլին գտնելը:

— Դու հաստատ գիտես, որ նա շէյխի բանակումն է, հարցրեց Սարհատը վերջովուած ձայնով:

— Ինչպէս չը գիտեմ, աչքովս տեսայ, հետը խօսեցի, պատասխանեց Մըստօն ուրախ կերպով:

— Նա ճանաչեց քեզ:

— Հէնց որ տեսաւ, իսկոյն ուզում էր վազել ինձ մօտ. ես նշան արեցի, նա զգուշացաւ:

— Ի՞նչպէս կարողացար տեսնել նրան:

Մըստօն պատմեց, թէ երբ նամակը տուեց շէյխին, նա հրամայեց մի օր սպասել, մինչեւ ինքն իր իշխանների հետ խորհուրդ կ'անի եւ պատասխանը կը գրի: Նրան տեղ տուեցին շէյխի վրանի մօտ եւ հրամայեցին կերակրել: Այն ժամանակ նա գտաւ «իրանցից» մէկին, որը կրօնով եղբի է, որին առաջուց ճանաչում էր: Նա այժմ շէյխի մերձակոր սպասաւորներից մէկն է, որ նրա համար չիբուխ լընում: Այդ մարդը Մըստօն տարաւ իր մօտ, եւ որպէս իր կրօնակցին ու հայրենակցին, սկսեց հիւրասիրել: Մըստօն կարող էր նրան հաւատալ, որպէս իր վաղեմի բարեկամին, եւ ինչդեպ ցոյց տալ իրան գերիները, եւ նրանց մէջ գտաւ Ասլին: Յետոյ նրան յայտնեց իր խորհուրդը, ասելով, թէ եկել է գողանալու այն աղջկան, թէ այն աղջիկը իր տիրոջ նշանածն է, որին շատ սիրում է: Մըստօնի հայրենակիցը խոստացաւ ինքը ծածուկ գուրս բերել աղջկան բանակից եւ յանձնել ում որ կ'ասի նա:

Սարհատը խորին ապշութեամբ լսում էր այս պատմութիւնը, դժուարութեամբ հաւատալով իր ականջներին: Նա հարցրեց.

— Դու հաւատում ես, որ քո հայրենակիցը կը կատարէ իր խոստմունքը:

— Եղիդին շուտ չէ խոստանում, բայց երբ խօսք տուեց, կատարում է իր խօսքը, պատասխանեց Մըստօն մի առանձին հպարտութեամբ:

Յետոյ նա աւելացրեց, թէ մի գաղտնիք, որ իրան առաջուց յայտնի էր այն մարդու վերաբերութեամբ, աւելի առիթ է տալիս հաւատալ նրա խոստմունքին: Այդ մարդու եղբորը, ասաց Մըստօն, մի քանի տարի առաջ սպանել տուեց շէյխը. հիմայ նա մտել է շէյխի մօտ որպէս սպասաւոր, որ կարողանայ իր եղբոր վրէժը առնել: Շէյխը չէ ճանաչում, թէ նա սպանուածի եղբայրն է կամ կրօնով եղբի է:

— Այսպիսի մարդու հաւատալու է, համոզուեցաւ վերջապէս Սարհատը: — Բայց նա ի՞նչպէս կարող է նրան դուրս բերել բանակից:

— Նա կը հագցնի Ասլին տղամարդի շորեր, եւ Ասլին ինքը դուրս կը գայ բանակից: — Մըստօն քիչ խելք չունի, ամեն բան կարգադրել է, ինչ որ պէտք է: Մենք այս գիշեր պէտք է պատրաստ լինենք բանակից փոքր ինչ հեռու մի ձորի մէջ, այնտեղ մի հին տանձենի կայ, նրա մօտ: Ասլին կը գայ այնտեղ եւ մեզ կը գտնի:

— Գիւրիների թիւը շատ է հարցրեց Սարհատը մի փոքր մտածելուց յետոյ:

— Հարիւրի չափ կնիկներ ու աղջիկներ ինքը շէյխը ընտրել է իր համար, մի քանի վրաններ լըն են, որ կազմուած են իր վրանի մօտ:



— Միւս քրդերը նոյնպէս ունեն։

— Մարդ չը կայ, որ մի քանի հատ բերած չը լինի, շատերին վաճառում են. ուշնեցի հրէաները գնում են, որ տանեն կրկին հայերի վրայ ծախսեն։ Շատ էժան է, մի աղջիկը մի արծաթ մէջեղիայով (1 ուրբի 20 կոպ.) կարելի է առնել։

Սարհատի մի փոքր պայծառացած գէմքը կրկին մթնեց, կրկին տիրեցին նրա սրտին դառն ցաւերը...

Այս խօսակցութիւնները Մըստօի եւ իր տիրոջ մէջ անց էին կենում առանձին, հեռացած մի փոքրիկ աղբիւրի մօտ, որ բղկում էր լեռնային ապառաժի ճեղքից։ Նոյն ժամուն նրա ընկերները պառկած էին աւելի հեռու, խոտերի վրայ, գիշերային արշաւանքից հանգստանալու համար։ Սարհատը մօտեցաւ նրանց, զարթեցրեց, եւ հաղորդելով Մըստօի բերած լուրերը, յայտնեց, թէ ինքը պէտք է գնայ դէպի Ջալալէգիլի բանակը։

— Մենք քեզանից չենք բաժանուի, պատասխանեցին ընկերները։

## ԹԻ.

Ղանլի-Դարան, որ նշանակում է արիւնոտ ձոր, արժանի է իր կոչմանը իր մէջ դործուած բազմաթիւ արիւնհեղութեանց պատճառով։ Այդ աւազակաց որջը վկայ է եղել հազարաւոր սարսափելի եղեռնադործութիւնների. այնտեղից ոչ մի քարաւան եւ ոչ մի ճանապարհորդ չեն վտահանում անցկենալ, այնտեղ միայն աւազակները առանձնանում են իրանց յափշտակութիւններից յետոյ։ Այնտեղ էր դրել եւ շէյխը իր բանակը Բայազէդի դժբախտ անցքից յետոյ, երբ նա հեռացաւ պատերազմի դաշտից։

Այդ ձորի միջով հոսում էր Տիգրիսի վերին ճիւղերից մէկը, որին տեղացիք կոչում են Նըհէլ. դա բաժանում է Աղբակայ գաւառը Ջօլամէրիկից։ Գետի ափի մօտ, մի կանաչադարձ տափարակի վրայ, մի գիշեր հարիւրաւոր տեղերում վառվում էին փոքրիկ խարոյկներ, որոնց շուրջը նստոտել էին զինուորուած քրդեր, խօսում էին, ծխում էին, ծիծաղում էին, երգում էին, եւ երբեմն նայում էին կերակուրի կաթսաներին, որ դրած էին խարոյկների վրայ, կամ դարձնում էին մնի մեծ-մեծ կտորները, որ ձգել էին կարմրած ածուխների վրայ խորովելու համար։ Ամեն տեղ երեւում էր ուրախութիւն, որ արտայայտուում էր կատաղի զուարճութիւններով։ Վրանների մէջ ճրագներ չէին երեւում, ամբողջ բանակը լուսաւորուած էր խարոյկների լուսով։ Բայց մի վրանում միայն ճրագներ կային. դա Ջալալէգիլի փառաւոր վրանն էր։

Բանակից հեռու, մի նեղ ձորի մէջ, որ դողաւորուելով բաժանվում էր Ղանլի-Դարայից, թմբուկի ձայն էր լսվում, եւ քրդի զուռնան հնչում էր «Ջանիմանի» եղանակով։ Նոյն ժամուն մի խումբ ձիաւորներ անցնում էին այն կողմից, որտեղից լսել էր լինում վայրենի նուագաճութիւնը։

— Այստեղ մի բան կայ, ասաց նրանցից մէկը հազիւ լսելի ձայնով։

— Նա էլ այսպէս եմ կարծում, պատասխանեց մի ուրիշը։

— Գնանք, տեսնենք։

— Գնանք։

Ձիաւորները դարձրին իրանց ձիերի գլուխները դէպի այն կողմը։ Նեղ շաւիղը, որ տանում էր այն կողմը,



տեղ-տեղ կորչում էր մացառների եւ մինը միւսի հետ հիւսուած պատատուկ թփերի մէջ: Չիով անհնար էր անցնել: Նրանք ցած իջան ձիերից, տուեցին մէկին պահելու, եւ միւսները առաջ գնացին: Մի քանի բոպէից յետոյ նրանք գտանվում էին մի փոքրիկ բլուրի գագաթի վրայ, որտեղից բացուեցաւ նրանց առջեւ մի այսպիսի տեսարան: —

Մի սարսափելի պարահանդէս էր այդ, որի նմանը երբէք Ղիօնիսիոսը չէ երեւակայել իր բաքոսական բոլոր անբարոյականութեամբ: Մի կողմում թմբուկները եւ զուռնաները ածում էին, մի կողմում պար էին բռնել այն ձեւով, որ մեզանում կոչվում է եալլի, իսկ քրդերը կոչում են գունադ: Պարում էին կանայք: Նրանք բազմաթիւ էին, եւ մինը միւսի ձեռքից բռնած, կազմել էին մի երկայն շարք, որ շղթայի նման պտըտուելով, ձեւայնում էր մի մեծ բոլորակ: Բոլորակի մէջ տեղում ցցած էին երկայն ձողեր, որոնց գլուխների վրայ վառվում էին ջահեր: Մաւթի մէջ թաթախած ցնցոտիքը բոցավառվում էին եւ իրանց ծիրանի շառաւիղներով լուսաւորում էին պարող կանանց գունաթափուած երեսները: Զահերի մօտ, բոլորակի միջնավայրում, նստած էին տղամարդիկ եւ դժոխային ոգեւորութեամբ նայում էին կանանց մերկ շղթայակապի վրայ, որ անդադար շրջում էր նրանց շուրջը:

Երեւում էր, որ այդ ողորմելի արարածները ակամայ եւ ստիպմամբ յանձն էին առել այդ խայտառակ պարահանդէսը: Ամօթը, անպատուութիւնը նրանց այն աստիճան մոլեգնութեան մէջ էին ձգել, որ իրանց կատաղութիւնը խելագարութեան էր հասնում: Նրանց աչքերում վառվում էին բարկութեան բոցեր, շղթանքները դողդողում էին տենդային անհանգստութեամբ եւ գունա-

թափ երեսների վրայ երեւում էին սոսկալի ցնցումներ: Շատերը նրանցից այնքան թուլասիրտ էին, որ չէին դիմանում անտանելի ցաւին, եւ ուշաթափ լինելով, ցած էին գլորվում: — Իսկ այդ բոլորը, որ մարդկային խղճի վրայ կարող էր ազդել գութ, որ կարող էր ամեն մի սիրտ, որքան եւ քարացած լինէր նա, մեղմացնել եւ լցնել նրան առաքինական զգացմունքներով դէպի տկար եւ գեղեցիկ սեռը, — ընդհակառակն, աւելի բորբոքում էր դերիչների վայրենի կրքերը եւ աւելի զրգուում էր նրանց անասնական ոգեւորութիւնը:

Պարը շարունակվում էր իր բոլոր դժոխային խաղարկութեամբ: Մերկ կանանց շարքը անդադար պտըտվում էր թմբուկների եղանակով: Տղամարդիկ նրանց բոլորակի միջնավայրում նստոտած, երգում էին, ծափահարում էին, գոռում էին եւ գոչում էին, եւ հերոսներից ամեն մէկը երբեմն իր թաշկինակը ձգում էր հաւանած կնոջ վրայ, եւ իսկոյն սրտերի հակառակ մի զոյգը — մի հրեշտակ եւ մի դեւ — առանձնանում էր մերձակայ թփերի մէջ:

Մարդկային անգթութիւնների մէջ չը կայ մի աւելի սարսափելի բան, քան թէ այն, երբ անմեղ ողջախոհութիւնը զոհվում է կատաղի բռնաբարութեան: Այսպիսի անգթութեան մէջ ընդունակ է մարդը միայն, բայց գաղանները եւ անասունները աւելի բարոյական են իրանց էգերի վերաբերութեամբ:

Մինչ գիշերային մթութեան մէջ, ջահերի լուսաւորութեան հանդէպ կատարվում էին այդ անամօթ զուարճութիւնները, բլուրի գագաթից անյայտ մարդերի մի խումբ խորին զզուանքով դիտում էր բոլորը: Ընթերցողը արդէն գուշակեց, թէ ովքեր էին դրանք:



— Պէտք է վրայ տալ, ասաց Սարհատը:

— Շատ են անիծածները, ասաց Դալի-Բաբան:

— Մի եւ նոյն է, եթէ մեզ պէտք էր մի օր մեռնել, լաւ է, որ այստեղ լինէր, պատասխանեց Սարհատը:

— Բայց դու կը կորցնես Ասլին, որի համար եկել ես, ասաց Դալի-Բաբան:

— Այս կնիկներից ամեն մէկը նոյնքան մեր ցաւակցութեան արժանի է, որքան Ասլին, պատասխանեց Սարհատը:

Ազնիւ երիտասարդը մոռացաւ իր անձնական սէրը, նրան գրաւում էր այժմ կնիկների վերաւորումը եւ անարգութեամբ պատիւը:

— Պէտք է յանկարծ վրայ տալ, ասաց Դալի-Բաբան, եւ աշխատել առաջ ջահերը խորտակել. խաւարի մէջ աւելի հեշտ կը լինի գործը:

— Նրկինքն էլ մեր բախտից ամպում է, ահա լուսինը այլ եւս չէ երեւում, նկատեց Բիթար-Դալիսին:

— Կռուեցէք սրերով միայն, խորհուրդ տուեց Սարհատը, — հրացան գործիքներով աղմուկ կը բարձրացնէք, բանակը շատ հեռու չէ այստեղից. թող ձայնը այնտեղ չը հասնի:

Քրդերի մօտ էլ չը կային հրացան գործիքներ. նրանք, որպէս իրանց տանը, վեր էին առել թրեր եւ դաշոյններ միայն, եւ այնպէս հեռացել էին բանակից, ամեն մինը իր հետ բերելով իր զօհը:

Այդ միջոցում Մըստօի դուռները անտանելի էր. նա տեսաւ, որ Սարհատը բոլորովին մոռացաւ Ասլին, բոլորովին թողեց այն նպատակը, որի համար եկել էր: Նա տեսաւ, որ այժմ իր սիրելի տէրը ձեռնարկում էր

մի այնպիսի յանդուգն եւ վտանգաւոր գործի, որից հազիւ կարող էր ողջ դուրս գալ: Ի՞նչ անել. մնալ նրա մօտ, նրա հետ միասին կռուել եւ նրա հետ մեռնել.

— այդ շատ էր ցանկանում բարի Մըստօն: Բայց միւս կողմում, մի աղջիկ, մի նազելի հրեշտակ, որին այնքան սիրում էր Սարհատը, որին ինքը վաղուց էր ճանաչում, որ այժմ գտանվում էր շէյխի բազմաթիւ զերի հարեմականների մէջ, — եւ այդ թշուառը նոյնպէս օգնութեան կարօտ էր, նոյնպէս պէտք էր ազատել նրան: Դէպի ո՞րը դիմել: Մի կողմում կանգնած էր իր մանկութեան ընկերը, միւս կողմում — նրա սիրուհին: Նա ընտրեց վերջինը, եւ առանց յայտնելու Սարհատին միայնակ դիմեց դէպի շէյխի բանակը:

Նրա ցնալուց յետոյ անակնկալ յարձակումը կատարուեցաւ կայծակի արագութեամբ: Ջահերը իսկոյն խորտակուեցան: Չորի մէջ տիրեց ընդհանուր խաւարը խորին զարհուրանքի հետ: Սարսափելի կոտորածը սկսուեցաւ:

Եթատ ահաբեկ բան է ձեռնամերձ կռիւր, մանաւանդ նեղ տեղում, այն եւս գիշերային խաւարի մէջ: Մի այսպիսի օրհասական կռուում սուր երկաթը սոսկալի գործ է կատարում մարդկային մարմնի հետ: — Կենդանի մարդը մահ զգեցած, կռուում է մահ գործելու համար:

Մի քանի ժամ կռիւր երկու կողմից եւս շարունակվում էր զազանային յամառութեամբ: Ընդհանուր խռովութեան մէջ շատ անգամ ընկերը իր սուրը ընկերի կողքն էր միտում: Թուսահատական դառն աղաղակները կռուել էին զէնքերի շաշիւնի հետ: Թէ սպանողը եւ խառնուել էին զէնքերի շաշիւնի հետ: Թէ սպանուածը շաղախուած էին տաք արիւնի մէջ: Դիակները ոտքերի տակ աւելի եւ աւելի խորտակվում էին:



Ձորը կրկին լուսաւորուեցաւ: Լուսինը դուրս եկաւ մոխրագոյն ամպերի ետեւից, կարծես, ցանկանում էր ականատես լինել մի գեղեցիկ գործի: Նոյն միջոցում հանդիսացաւ մի սրտաշարժ տեսարան: Մերկ կանանց խումբը բաւական էր, որ հասկացաւ, թէ կռիւը իրանց ազատութեան համար է. — նրանք կատաղե ֆուրիաների նման իրանք էլ խառնուեցան կռուի մէջ: Սարսափելի բան է կնոջ մոլեգնութիւնը, երբ առաջ է գալիս անձնական վրէժխնդրութիւնից: Այսպիսի բոպէներում կինը մոռանում է իր կնութիւնը. նա դառնում է մահուան հրեշտակ եւ սկսում է իր ձեռքը մխել այն սրտի մէջ, որը անարգաբար ոտքի տակ տուեց իր պատիւը: Այն կանայքը, որ մի քանի ժամ առաջ, բռնութեան կոպիտ ձեռքից ստիպուած, յանձն էին առել մի ցած պաշտօն, այժմ, երբ նրանց ականջներին հնչեց ազատութեան ձայնը, — լսեցին իրանց ոտքերի տակ ընկած գերիշների գէնքերը եւ սկսեցին կոտորել կենդանի մնացած գազաններին: Պատուի զգացմունքը սկսեց պատերազմել անասնական կրքերի հետ. հրեշտակը դեւերի հետ...

Լուսինը կրկին մտաւ ամպերի տակ եւ գիշերային խաւարը քաշեց իր սեւ վարագոյրը: Տեսարանը ծածկուեցաւ մթութեան մէջ...

Վանայ ծովակի արեւմտեան ափերի մօտ, Սիփան լեռան ստորոտներում, մի փոքրիկ վտակի կանաչազարդ եզերքի մօտ, երեւում էին խաշնարածների մի քանի չադրներ, որոնց արտաքին աղքատ կերպարանքը ցոյց էր տալիս, թէ այդ ողորմելի հովիւները չեն պատկանում

քրդերի բախտաւոր որ եւ իցէ ցեղին: — Դրանք, հայերից աւելի հալածուած, եղիղների վրաններ էին, որ պատերազմի խռովութիւնների ժամանակ քաշուել էին այն լեռնային խուլ առանձնութեան մէջ իրանց կեանքը եւ փոքրաթիւ անասունները պահպանելու համար:

Յիշեալ վրաններից մէկի մէջ, որ իր վեճակով չէր զանազանվում միւսներից, Ղանլի-Դարայի սոսկալի կոտորածից մի շաբաթ յետոյ, կարելի էր տեսնել մահճի մէջ պառկած մի տղամարդ, մահուան պէս գունաթափուած դէմքով եւ խորն ընկած միջին աչքերով: Նա հազիւ կարողանում էր շունչ առնել եւ խիստ դժուարութեամբ էր կարողանում շարժուել մի կողքից դէպի միւսը. երեւում էր, ծանր կերպով վերաւորուած էր նա: — Հիւանդը Սարհատն էր: Նրա բարձի մօտ նստել էր մի օրիորդ մաշուած, վշտահար դէմքով արսասուքով լե աչքերով. — դա Ասլին էր, որին Ղանլի-Դարայի անցքի ժամանակ Մըստօին յաջողուել էր գողանալ: Հիւանդի աջ եւ ձախ կողմերում, որպէս տխրութեան երկու հրեշտակներ, նստած էին երկու ուրիշ աղջիկներ, եւ նոյնպէս լաց էին լինում. — դրանք նրա քոյրերն էին: Վրանի մի կողմում, աչքերը բռնած, կուչ էր եկել նրա փոքրիկ եղբայրը: Դսկ դրսում, վրանի մուտքի մօտ նստած, հեկեկում էր ինքը Մըստօն: Մի մանկահասակ կին գեղեցիկ սեւորակ աչքերով ոտքի վրայ պտրտվում էր. — դա Մըստօի կինն էր:

Հիւանդը գտանվում էր հոգեվարքի ճգնաժամի մէջ...

Ղանլի-Դարայի կռուի մէջ Սարհատի ընկերներից ազատուեցան երեք վերաւորածներ միայն. միւսները բոլորը ընկան: Ընկան եւ այն քաջազնուհիներից շատերը, որոնք



բռնաբարութեան բարոյական մահը սրբեցին իրանց արեամբ...

Վերաւոր առիւծը վերջին անգամ բաց արեց աչքերը, նայեց Ասլի վրայ, նայեց քոյրերի եւ եղբոր վրայ, եւ փակեց նրանց... Մի «նի» եղաւ նրա վերջին խօսքը...

«Դու իմ վրանիս տակն ես մեռնում, ով քաջ, եւ իմ վրայ ես թողնում վրէժխնդիր լինել քո մահո՛ւնն համար — Մըստօն կը կատարէ այդ... ասաց նա հառաչելով եւ գրկեց մեռանողի գլուխը:



# ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

## ՐԱՖԳԻԻ ՄԱՅԻՑ ՅԵՏՈՅ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԲԱՐՔԻ

1. «ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ,  
(սպառուած) . . . . . —.—
2. «ԽԵՆԹԸ, ԵՒ «ՋԱԼԱԼԷԴԻՒՄ» ՄԻ ԳՐԲԻ ՄԷՋ ԵՄԸ  
փոփոխած, Բ. տպագր. (սպառուած) . . . . . —.—
3. «ԴԱԻԹ-ԲԷԿ» ՀԱՐ. Ա. Բ ԵՒ Գ ՎԵՐՋԱՐԱՆՈՎ,  
Բ. տպագր. (սպառուած) . . . . . —.—
4. «ՄԻՆ ԱՅՍՊԷՍ, ՄԻՒՍՆ ԱՅՆՊԷՍ», ԿԱՏԿԵՐԱ-  
ՉԱՐԳ ՎԷՍ (սպառուած) . . . . . —.—
5. «ԿԱՅԵՐԻՒՆ» Ա. ՀԱՐ. Բ. տպագր. (սպառուած) . . . . . —.—
6. «ԿԱՅԵՐԻՒՆ ՎԵՐՋԸ» (սպառուած) . . . . . —.—
7. «ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ» ՀԱՐ. Ա. (սակաւ.) 2.—
8. «ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ» ՀԱՐ. Բ. (սակաւ.) 2.—
9. «ԱՐԾԻԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ» (սպառուած) . . . . . —.—
10. «ԽԱՄՍԱՅԻ ՄԻԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ» Բ. տպագր.  
(սպառուած) . . . . . —.—
11. «ՊԱՐՈՅԻ ՀԱՅԿԱՋՆ» (սպառուած) . . . . . —.—
12. «ՈՂ ԷՐ ՄԵՂԱԻՈՐ» (սպառուած) . . . . . —.—
13. «ՋԱՀՐՈՒՄԱՐ» ՎԷՍ . . . . . 2.—
14. «ՏԱՃԿԱՀԱՅԲ» . . . . . —.50
15. «ԽԱՉԱԳՈՂԻ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ, ՀՈՐԱ ՄԱՍԵՐԸ ՄԻ  
ԳՐԲԻ ՄԷՋ ԵՄԸ Բ. տպագր. (սպառուած) . . . . . —.—
16. «ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂԸ» Բ. տպագր. . . . . 1.—
17. «ՂԱՐԱՐԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ» Բ. տպագր. (սպառ.) 1.—



18. "ՍԱՄՈՒԷԼ, Ա. Բ. ԵԼ Գ. Հատորները մի գրքի մէջ րուբլի  
ամփոփուած, Բ. տպագր. . . . . 3.50
19. "ԴԱԻԻԹ-ԲԷԿ" Հար. Ա. Բ. ԵԼ Գ. վերջաբանով,  
Գ. տպագր. . . . . 3.50
20. "ԿԱՅԾԵՐ" Ա. Հար. Գ. տպագր. . . . . 2.—
21. "ԿԱՅԾԵՐ" Բ. Հար. ԵԼ վերջ, Բ. տպագր. . . . . 3.—
22. "ԽԵՆԹԸ, ԵԼ "ՋԱԼԱԼԷԴԴԻՆ" մի գրքի մէջ ամփոփուած,  
Գ. տպագր. . . . . 2.—
23. "ՋԱԼԱԼԷԴԴԻՆ" առանձին, Գ. տպագր. . . . . —.50

Հրատ. ԱՅՐԻ ԱՆՆԱ ԲԱՖՖԻ

Mme. Raffi

32, Richmond Gardens, Shepherd's Bush, London, W. (England).

Հ Ե Տ Ջ Հ Ե Տ Է Լ Ո Յ Ս Պ Ի Տ Ի Տ Ե Ս Ն Ե Ն

## ԲԱՓՓՐԸ

ՀԵՏԵԻԵԱԼ ՍՊԱՌՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. "ՍԱԼԲԻ" Ա. Բ. ԵԼ Գ. մեծագիր Հատորներ (անտիպ):
2. "ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ" Հար. Ա. Բ. Գ. ԵԼ Գ.:
3. "ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ":
4. "ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԻՏԸ":
5. "ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ":
6. "ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ":
7. "ՄԻՆՆ ԱՅՍՊԷՍ ՄԻՒՍՆ ԱՅՆՊԷՍ":
8. "ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ ԵԼ սպառուած):
9. "ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ ԵԼ սպառուած):
10. "ՀՐԱՊԱՐԱԿԱՆՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ ԵԼ սպառուած):
11. "ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ ԵԼ սպառուած):
12. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" Հար. Գ. (անտիպ ԵԼ սպառու.):
13. "ՆԱՄԱԿՆԵՐ" (անտիպ):
14. "ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ" ԵԼային, ԵԼային:


## Բ Ա Ֆ Ֆ Ի Ի

Վ Ա Ճ Ա Ն Ե Լ Ը Գ Բ Ք Ե Բ Ն Ե Ն

1. "ՍԱՄՈՒԷԼ, Հար. Ա. Բ. ԵԼ Գ. մի գրքի րուբլի  
մէջ ամփոփուած, Բ. տպագրութիւն . . . 3.50 8
2. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" Հար. Ա. 2.— 4 1/2
3. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" Հար. Բ. 2.— 4 1/2
4. "ՋԱՀՐՈՒՄԱՐ" վէպ . . . . . 2.— 4 1/2
5. "ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ" . . . . . 1.20 2 1/2
6. "ՏԱՃԿԱՀԱՅՔ" . . . . . —.50 1
7. "ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂԸ" Բ. տպագր. . . . . 1.— 3
8. "ԴԱԻԻԹ-ԲԷԿ" Հար. Ա. Բ. ԵԼ Գ. վեր-  
ջաբանով, Գ. տպագր. . . . . 3.50 8
9. "ԿԱՅԾԵՐ" Հար. Ա., Գ. տպագր. . . . . 2.— 5
10. "ԿԱՅԾԵՐ" Հար. Բ. ԵԼ վերջ, Բ. տպ. 3.— 7
11. "ԽԵՆԹԸ, ԵԼ "ՋԱԼԱԼԷԴԴԻՆ" մի գրքի  
մէջ ամփոփուած, Գ. տպագր. . . . . 2.— 5
12. "ՋԱԼԱԼԷԴԴԻՆ" առանձին, Գ. տպագր. —.50 1 1/2









1  
0 22

ՀՀ Ազգային գրադարան



NL0367186



59.389